

**Դատական գործ N: ԵՔԴ/0103/02/09**

**Հայցադիմումը /դիմումը/ ստացվել է:** 10-02-2009

**Հայցվոր/դիմող**

Անուն: Մասթր Բևրիջ Ինդասթրիս Պտե.Լթդ ընկերություն  
 Հասցե: Երևան, Կ.Ուլնեցի 66-41

**Պատասխանող**

Անուն: ՏԿՄ Թրեյդ ԲԲԸ  
 Հասցե: Մասկվա

**Պատասխանող**

Անուն: ՀՀ ՖՆ մտավոր սեփականության գործակալություն  
 Հասցե: Երևան, Կառավարական տուն 3

**Քաղաքացիական գործի ստացման կարգը:** Առաջին անգամ

**Ինքնուրույն պահանջ ներկայացնող:**

**3-րդ անձ**

Անուն  
 Ազգանուն

Հասցե  
**Պահանջ:** ապրանքային նշանի զիջման պայմանագիրն անվավեր ճանաչելու

**Հիմնական պահանջի վիճակագրության տողի համարը:** 5.5

**Պետական տուրք:** 8000

**Պատասխանի ստացման ամսաթիվը:**

**Հակընդդեմ հայցի ներկայացման ամսաթիվը:**

**Հակընդդեմ պահանջ:**

**Պետական տուրք:**

**Ամսաթիվ:** 11-02-2009

**Նախագահող դատավոր**

Դատարանի անվանում: Երևանի քաղաքացիական  
 Դատավորի անուն: Սամվել Եփրեմի Թադևոսյան

**Դատավոր**

Դատարանի անվանում: Երևանի քաղաքացիական  
 Դատավորի անուն: Սամվել Եփրեմի Թադևոսյան

**Որոշման ամսաթիվ:** 13-02-2009

<b>Որոշման ամսաթիվը:</b>	27-02-2009
<b>Դատարան:</b>	Կենտրոն և Նորք-Մարաշ
<b>Որոշման բովանդակությունը:</b>	Թիվ ԵՔԴ 0103/02/09 քաղաքացիական գործն ըստ հայցի <Մասթեր Բեկրիջ Ինդասթրիս Պտե.Լթդ> ընկերության ընդդեմ <ՏՎՄ Թրեյդ> բաց բաժնետիրական ընկերության, << Էկոնոմիկայի նախարարությունա մտավոր սեփականության գործակալության՝ ապրանքային նշանի զիջման պայմանագիրն անվավեր ճանաչելու և ապրանքային նշանի գրանցման մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին փոխանցել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:
	Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ս . Թ Ա Դ Ե Վ Ո Ս Յ Ա Ն
<b>Որոշման հիմքը</b>	
<b>Հոդված</b>	ՀՕ-44-Ն
<b>Ուղարկման ամսաթիվը:</b>	27-02-2009
<b>Էջերի քանակը:</b>	63
<b>Գործին կից նյութերը:</b>	
<b>Գրության համարը:</b>	
<b>Դատական Գործ N: ԵՔԴ/0103/02/09</b>	
<b>Ամսաթիվ:</b>	09-03-2009
<b>Ամսաթիվ:</b>	09-03-2009
<b>Նախագահող դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Կենտրոն և Նորք-Մարաշ
Դատավորի անուն:	Սամվել Եփրեմի Թադևոսյան
<b>Դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Կենտրոն և Նորք-Մարաշ
Դատավորի անուն:	
<b>Որոշման ամսաթիվ:</b>	11-03-2009
<b>Դատաքննության ամսաթիվ:</b>	28-04-2009
<b>Ծանուցագիրը ուղարկվել է:</b>	08-04-2009
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ժամ:</b>	
<b>Դատաքննության ամսաթիվ:</b>	01-07-2009
<b>Ծանուցագիրը ուղարկվել է:</b>	29-04-2009
<b>Այլ նշումներ:</b>	

Ժամ:	10:30
Նիստերի դահլիճի համար:	6
Դատաքննության ամսաթիվ:	02-11-2009
Ծանուցագիրը ուղարկվել է:	23-09-2009
Այլ նշումներ:	
Ժամ:	10:30
Նիստերի դահլիճի համար:	6
Դատաքննության ամսաթիվ:	23-11-2009
Ծանուցագիրը ուղարկվել է:	02-11-2009
Այլ նշումներ:	
Ժամ:	11:30
Նիստերի դահլիճի համար:	6
Դատաքննության ամսաթիվ:	02-12-2009
Ծանուցագիրը ուղարկվել է:	23-11-2009
Այլ նշումներ:	
Ժամ:	10:00
Նիստերի դահլիճի համար:	6
Դատաքննության ամսաթիվ:	23-12-2009
Ծանուցագիրը ուղարկվել է:	02-12-2009
Այլ նշումներ:	
Ժամ:	11:30
Նիստերի դահլիճի համար:	6
Դատաքննության ամսաթիվ:	03-02-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	14-01-2010
Այլ նշումներ:	
Ժամ:	10:30
Նիստերի դահլիճի համար:	6
Դատաքննության ամսաթիվ:	05-03-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	03-02-2010
Այլ նշումներ:	
Ժամ:	10:00
Նիստերի դահլիճի համար:	6
Դատաքննության ամսաթիվ:	12-04-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	05-04-2010
Այլ նշումներ:	

Ժամ:	10:30
Նիստերի դահլիճի համար:	6
Դատաքննության ամսաթիվ:	29-04-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	14-04-2010
Այլ նշումներ:	
Ժամ:	11:30
Նիստերի դահլիճի համար:	6
Դատաքննության ամսաթիվ:	03-06-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	17-05-2010
Այլ նշումներ:	
Ժամ:	12:20
Նիստերի դահլիճի համար:	6
Դատաքննության ամսաթիվ:	18-06-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	03-06-2010
Այլ նշումներ:	
Ժամ:	16:00
Նիստերի դահլիճի համար:	6
Դատաքննության ամսաթիվ:	28-06-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	18-06-2010
Այլ նշումներ:	
Ժամ:	12:00
Նիստերի դահլիճի համար:	6
Դատաքննության ամսաթիվ:	16-08-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	08-07-2010
Այլ նշումներ:	
Ժամ:	11:30
Նիստերի դահլիճի համար:	6
Դատաքննության ամսաթիվ:	20-08-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	05-08-2010
Այլ նշումներ:	
Ժամ:	11:30
Նիստերի դահլիճի համար:	8
Հայցի լուծման ամսաթիվ:	03-09-2010
Հայցի լուծումը:	Մերժվել է
<b>Հոդված</b>	

Հողված	ՀՀ քաղ. դատ. օր-ի 118, 130-132
Հակընդդեմ հայցի լուծումը :	
Հակընդդեմ հայցի լուծման ամսաթիվ:	
Այլ նշումներ:	
<p><b>Պատական ակտ (վճիռ, որոշում):</b></p>	<p>Գործ ԵՔԴ 0103/02/09</p> <p>ՎՃԻՌ  ՀԱՆՈՒՄՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  03.09.2010թ. ք. Երևան</p> <p>Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը</p> <p>Նախագահությամբ Սամվել Թադևոսյանի Քարտուղարությամբ Կարինե Սարգսյանի Մասնակցությամբ Պատասխանող «ՏՎՄ Թրեյդ» ԲԲԸ-ի ներկայացուցիչներ Արարատ Գալոյանի Տիգրան Փոլադյանի Պատասխանող ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության ներկայացուցիչ Արա Աբգարյանի</p> <p>Ղռնբաց դատական նիստում, դատարանում, քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի «Մասթր Բերիջ Ինդասթրիս Պտե.Լթթ» ընկերության /պետ. գրանցում 199201831M/ ընդդեմ «ՏՎՄ Թրեյդ» բաց բաժնետիրական ընկերության /գրանցման թիվ՝ 1027700498209, ՀՎՀՀ 7724005091/, ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության՝ ապրանքային նշանի զիջման պայմանագիրն անվավեր ճանաչելու և ապրանքային նշանի գրանցման մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին</p> <p><b>Պ Ա Ր Զ Ե Ց</b>  <b>Ի. Նկարագրական մաս</b></p> <p>1.Պատավարական նախապատմությունը.  Երևանի քաղաքացիական դատարանի վարույթում է գտնվել «Մասթր Բերիջ Ինդասթրիս ՊՏԵ.Լթթ» ընկերության հայցն ընդդեմ «ՏՎՄ Թրեյդ» բաց բաժնետիրական ընկերության, ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության՝ ապրանքային նշանի զիջման պայմանագիրն անվավեր ճանաչելու և ապրանքային նշանի գրանցման մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:  Համաձայն ՀՀ Ազգային ժողովի կողմից 2009 թվականի փետրվարի 5-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-44-Ն) 15 հոդվածի 2-րդ կետի նշված քաղաքացիական գործը 27.02.2009թ. որոշմամբ փոխանցվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան:  Պատարանի 11.03.2009թ. որոշմամբ թիվ ԵՔԴ 0103/02/09 քաղաքացիական գործն ընդունվել է վարույթ:  Գործի քննությունն իրականացվել է նախապատրաստական փուլով:  Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 04.12.2009թ. և 01.07.2010թ.</p>

որոշումներով համապատասխանաբար մերժվել է հայցվոր «Մասթեր Բևրիջ Ինդասթրիս Պտե.Լթթ»-ի և պատասխանող «ՏԿՄ Թրեյդ» բաց բաժնետիրական ընկերության ներկայացուցիչների միջնորդությունները՝ դատավոր Ս. Թադևոսյանին ինքնաբացարկ հայտնելու մասին:

Դատարանի 01.07.2010թ. որոշմամբ մերժվել է հայցվոր «Մասթեր Բևրիջ Ինդասթրիս Պտե.Լթթ»-ի ներկայացուցիչ միջնորդությունը դատաձեռագրաբանական փորձաքննություն նշանակելու մասին: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հայցվորի ներկայացուցիչին 06.01.2010թ. ուղարկված ծանուցումը 16.08.2010թ. ետ է վերադարձվել «քաղաքից բացակայում է» մակագրությամբ, իսկ դատարանին և գործին մասնակցող անձանց չի տեղեկացրել իր հասցեն փոխելու վերաբերյալ, ուստի, դատարանը իրեն վերջին հայտնի հասցեով ուղղարկված ծանուցմունքը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 80 հոդվածի կարգով համարել է հայցվորին հանձնված և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 118 հոդվածով դատական նիստն անցկացրել է հայցվոր կողմի բացակայությամբ:

Հայցվորի դիրքորոշումը.

Հայցվորի ներկայացուցիչ Լիաննա Յորդանյանը դատարանին հայտնել է,

2008 թվականի մայիսի 29-ին ՀՀ մտավոր սեփականության գործակալության (այսուհետ նաև Գործակալություն ) գրանցվել է Golden Eagle ապրանքանիշ նշանի գիջման պայմանագիրը: Ձիջման պայմանագրում, որը ներկայացվել էր Գործակալությանը, առկա են հայցվոր և պատասխանող ընկերության պաշտոնատար անձանց ստորագրությունները, հայցվորի կողմից պայմանագիրը ստորագրել է պարոն Սարգսևը: Ձիջման պայմանագրի հետ միասին, Գործակալություն է ներկայացվել նաև պատասխանողի և նույն պարոն Սարգսևի կողմից ստորագրված լիազորագիր, որով արտոնագրային հավատարմատարը լիազորվել էր ներկայացնել Ձիջման պայմանագիրը գրանցման: 2008 թվականի հունիսի 13-ին «Մասթեր Բևրիջ Ինդասթրիս Պտե.Լթթ» ընկերությունը Գործակալություն է դիմել՝ պահանջելով չեղյալ ճանաչել Ձիջման պայմանագրի գրանցումը: Բողոքարկման խորհուրդը 29.07.2008թ. թիվ 24/08 որոշմամբ, բավարարել է պահանջը: Բողոքարկման խորհրդի այդ որոշումը պատասխանող ընկերության կողմից վիճարկվել է: Նրանց ներկայացված իրենց պահանջում ներկայացվել է նաև Ձիջման պայմանագրի և լիազորագրի անվավեր լինելու մասին: Սակայն, Բողոքարկման խորհուրդը չի անդադարձել այդ փաստարկներին, նշելով որ դրանք քննության ենթակա չեն և կարող են քննվել ու որոշվել միայն դատական կարգով: Վիճարկվող Ձիջման պայմանագրում և լիազորագրում առկա է միայն պարոն Սարգսևի ստորագրությունը, ով ընկերության երկու տնօրեններից մեկն է: Այս առումով նա նման փաստաթղթեր միանձնյա ստորագրելու իրավասություն չի ունեցել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1272 հոդվածի համաձայն օտարերկրյա իրավաբանական անձի անձնական օրենքն այն պետության իրավունքն է, որտեղ հիմնադրվել է այդ իրավաբանական անձը:

Այս նորմից հետևում է, որ պարոն Սարգսևի իրավասության հարցը որոշելիս պետք է առաջնորդվել Սինգապուրի օրենսդրությամբ, քանի որ այնտեղ է հիմնադրվել հայցվոր ընկերությունը: Ընկերությունների մասին Սինգապուրի օրենքի 160-րդ հոդվածի 1-ին ընկերության տնօրեններից մեկն իրավունք չունի միանձնյա կնքելու այնպիսի գործարքներ որոնք ենթադրում են ընկերության ամբողջ գույքի կամ դրա էական մասի օտարում: Նման գործարքները կարող են կնքվել միայն բոլոր տնօրենների կողմից համատեղ և պարտադիր կերպով պետք է հավանության արժանանան ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի

Կողմից:

Նույն օրենքի 216 հոդվածը նախատեսում է « որ վերը նշված կանոնի խախտմամբ ընդունված գործարքները կարող են դատական կարգով անվավեր ճանաչվել ու ոչ մի իրավական հետևանք չունենալ» բացի բնականաբար անվավերության հետևանքներից:

Որպեսզի միանգամից բացառվի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1272-րդ հոդվածի 3-րդ մասի շահարկումը նշել են« որ առնվազն սկսած 2008 ապրիլ ամսից» այսինքն Գործակալությունում Ձիջման պայմանագիրը գրանցման ներկայացնելուց առնվազն մեկ ամիս առաջ» պատասխանող ընկերությունը տեղյակ էր այս սահմանափակման մասին:

Այսպես՝ հայցադիմումին կից ներկայացրել են 2004 թվականին Ռուսաստանի Ղաշնությունում քննված գործերի վերաբերյալ մի շարք վճիռներ՝ որոնք վերաբերում են պատասխանող ընկերության և հայցվոր ընկերության տնօրեններից մեկի՝ Սարգակի միջև կնքված նմանատիպ զիջման պայմանագրերի անվավերությանը: Այդ վճիռներում՝ ինչպես նշվեց՝ ևս վիճարկման առարկա են դարձել պատասխանող ընկերության և հայցվոր ընկերության տնօրեններից մեկի՝ Սարգակի միջև կնքված զիջման պայմանագրեր: Բոլոր այդ գործերով ՌԴ դատարանները նույնպես հղում են կատարել ու կիրառել են Սինգապուրի Ընկերությունների մասին օրենքի վերը նշված նորմերը՝ բոլոր դեպքերում էլ անվավեր ճանաչելով զիջման պայմանագրերը: Սինգապուրի օրենսդրության վերը նշված նորմերի ուժով պնդել են՝ որ պարոն Սարգակը վիճարկվող Ձիջման պայմանագիրը և լիազորագիրը միանձնյա կերպով ստորագրելու իրավունք չի ունեցել: Մասնավորապես ինչպես նշվեց՝ տվյալ դեպքում բացակայում են նմանատիպ գործարքի կնքման համար պարտադիր երկու պայման՝

1. քանի որ հայցվոր ընկերությունն ունի երկու տնօրեն՝ ապա պետք է լինի նաև երկրորդ տնօրենի ստորագրությունը՝ որը բացակայում է՝ և

2. այդպիսի գործարքի կնքումը հավանության չի արժանացել հայցվոր ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից: Որպեսզի Ընկերությունների մասին Սինգապուրի օրենքի 160-րդ հոդվածի 1-ին մասը կիրառելի լինի՝ անհրաժեշտ է որ խոսք գնա այնպիսի գործարքի մասին որը ենթադրում է ընկերության ամբողջ գույքի կամ դրա էական մասի օտարում: Այս առումով պնդել են՝ որ վիճարկվող ապրանքային նշանը հանդիսանում է հայցվոր ընկերության գույքի էական մասը՝ այն նշանակությամբ որ նա ունի ընկերության քիզնեսի համար: Բավարար է միայն նշել՝ որ վիճարկվող ապրանքային նշանը հանդիսանում է հայցվոր ընկերության արտադրանքի հիմնական ապրանքային նշանը և դրա օտարումն այլ ընկերության գործնականում հայցվորին զրկում է իր քիզնեսի առնվազն էական մասից:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև Վարչարարության մասին օրենք) 63-րդ հոդվածը նախատեսում է օրենքի խախտմամբ ընդունված վարչական ակտերի անվավեր ճանաչմանը: Մասնավորապես՝ այդ հոդվածի համաձայն վարչական ակտերը կարող են անվավեր ճանաչվել դատական կարգով: Ձիջման պայմանագրի գրանցման ընթացակարգը սահմանված է «Ապրանքային և սպասարկման նշանների» ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքով (այսուհետ նաև Օրենք), որի 25-րդ հոդվածի համաձայն՝ ապրանքային նշանը պայմանագրով կարող է զիջվել այլ անձանց՝ բոլոր այն ապրանքների կամ դրանց մի մասի համար՝ որոնք նշված են ապրանքային նշանի վկայագրում: Իսկ, նույն օրենքի 27րդ հոդվածի համաձայն՝ ապրանքային նշանի զիջման պայմանագրերը գրանցվում են լիազոր մարմնում: Հետևաբար Ձիջման պայմանագիրը գրանցելու մասին որոշում վարչական ակտ է հանդիսանում և ընդունվում է վարչարարության արդյունքում: Հաշվի

առնելով այն հանգամանքը՝ որ Զիջման պայմանագիրը հայցվոր ընկերության անունից կնքել է այդպիսի իրավասություն չունեցող անձ՝ այսինքն պայմանագիրն ըստ էության անվավեր է՝ ապա Զիջման պայմանագիրը գրանցելու մասին որոշման նկատմամբ լիովին կիրառելի է դառնում Վարչարարական մասին օրենքի 63-րդ հոդվածը՝ քանի որ գրանցելով անվավեր պայմանագիր՝

Գործակալությունն արդյունքում իր վարչական ակտն ընդունել է օրենքի խախտմամբ:

Խնդրել է անվավեր ճանաչել Զիջման պայմանագիրը՝ ինչպես նաև անվավեր ճանաչել զիջման պայմանագիրը գրանցելու մասին

Գործակալության 29.05.2008թ. որոշումը:

Առարկելով «ՏՎՄ Թրեյդ» բաց բաժնետիրական ընկերության կողմից ներակայացված պատասխանի վերաբերյալ և լրացնելով հայցի հիմքը հայտնել է հետևյալը. պատասխանի նախաբանում նշված այն հանգամանքը՝ որ ՀՀ քաղաքացիական դատարանի վճիռը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ՝ չի համապատասխանում իրականությանը: ՀՀ քաղաքացիական դատարանի վճիռը բողոքարկվել է վերաքննության կարգով և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը բեկանել է ՀՀ քաղաքացիական դատարանի վճիռը:

Ինչ վերաբերում է Պատասխանում բարձրացված ապրանքային նշանի զիջման պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր»)

նկատմամբ կիրառվելիք իրավունքին՝ նշել է՝ որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1285-րդ հոդվածը սահմանում է կիրառվելիք իրավունքի վերաբերյալ պայմանագրի կողմերի համաձայնության բացակայության դեպքում այդ պայմանագրի նկատմամբ կիրառվելիք իրավունքը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1285-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերում թվարկված պայմանագրերի շարքում ներառված չէ ապրանքային նշանի զիջման պայմանագիրը: Իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1285-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն կիրառվելիք իրավունքի վերաբերյալ կողմերի համաձայնության բացակայության դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1285-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերում չթվարկված պայմանագրերի նկատմամբ կիրառվում է այն պետության իրավունքը՝ որտեղ հիմնադրվել է՝ բնակչության վայր կամ գործունեության հիմնական վայր ունի այն կողմը՝ որը կատարում է նման պայմանագրի բովանդակության համար վճռական նշանակություն ունեցող պայմանը: Տվյալ դեպքում անհնար է որոշել Պայմանագրի բովանդակության համար վճռական նշանակություն ունեցող պայմանը: Պայմանագրի բովանդակության համար վճռական նշանակություն ունեցող պայմանը որոշելու անհնարինության դեպքում կիրառվում է այն պետության իրավունքը՝ որի հետ առավել սերտ է կապված տվյալ պայմանագիրը: Տվյալ դեպքում Պայմանագիրը առավել սերտ է կապված Հայաստանի Հանրապետության հետ՝ այն պարզ պատճառով՝ որ Պայմանագրի օբյեկտը Հայաստանի Հանրապետությունում գրանցված ապրանքային նշանն է: Եվ Պայմանագիրը գրանցվել է Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության գործակալության կողմից: Հետևաբար՝ Պայմանագրի նկատմամբ կիրառելի է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1272-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն իրավաբանական անձի անձնական օրենքի հիման վրա որոշվում են իրավաբանական անձի իրավունակության բովանդակությունը՝ քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և քաղաքացիական պարտականություններ ստանձնելու կարգը՝ ներսում ծավալվող հարաբերությունները՝ ներառյալ իրավաբանական անձի հարաբերություններն իր մասնակիցների հետ: Նույն հոդվածի 1-ին մասի համաձայն օտարերկրյա իրավաբանական անձի անձնական օրենքն այն պետության իրավունքն է՝ որտեղ հիմնադրվել է այդ իրավաբանական անձը:



Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1272-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերից հետևում է՝ որ Սինգապուրի օրենքներով է որոշվում՝ թե Մաստեր Բեվերիջ Ինդաստրիս Պոտ Լթը ընկերության որ մարմիններն են իրավասու վերջինիս անունից կնքելու գործարքներ:

Սինգապուրի ընկերությունների մասին օրենքի 160.– (1) հոդվածի համաձայն անկախ ընկերության կանոնադրության մեջ առկա որևէ դրույթի՝ տնօրենները չեն կարող կնքել ընկերության ամբողջ գույքի կամ դրա էական մասի կամ ընկերության ամբողջ գործունեությանը կամ դրա էական մասի տնօրինմանը վերաբերող որևէ գործարք՝ եթե այդ գործարքը չի հաստատվել ընկերության ընդհանուր ժողովի կողմից:

Տվյալ դեպքում Պայմանագիրը չի հաստատվել Մաստեր Բեվերիջ Ինդաստրիս Պոտ Լթը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվաներ է: Ուստի Պայմանագիրն անվավեր է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 315 հոդվածի համաձայն եթե անձի՝ գործարք կնքելու լիազորությունները սահմանափակված են պայմանագրով կամ իրավաբանական անձի մարմնի լիազորությունները՝ նրա կանոնադրությամբ՝ համեմատած այն լիազորությունների հետ՝ որոնք սահմանված են լիազորագրում՝ օրենքում կամ ակնհայտ են այն իրադրությունից՝ որում կնքվել է գործարքը՝ և դա կնքելիս նման անձը կամ մարմինը դուրս է եկել այդ սահմանափակումների շրջանակներից՝ դատարանը կարող է գործարքն անվավեր ճանաչել այն անձի հայցով՝ ի շահ որի սահմանված են սահմանափակումները՝ միայն այն դեպքերում՝ երբ կապացուցվի՝ որ գործարքի մյուս կողմը գիտեր կամ ակնհայտորեն պետք է իմանար նշված սահմանափակումների մասին:

Ընկերության տնօրեն պարոն Սարգսևի լիազորությունները սահմանափակված են եղել «ՏՎՄ Թրեյդ» բաց բաժնետիրական ընկերության կանոնադրությամբ: Գրեթե բոլոր երկրների օրենսդրություններին՝ այդ թվում Հայցվորի անձնական օրենքի՝ Ռուսաստանի Ղաշնության օրենսդրությանը՝ հայտնի են ընկերության տնօրենի լիազորությունների սահմանափակման սկզբունքը: Հետևաբար՝ Հայցվորը ակնհայտորեն պետք է իմանար՝ որ որևէ ընկերության՝ այդ թվում Մաստեր Բեվերիջ Ինդաստրիս Պոտ Լթը տնօրենի լիազորությունները բացարձակ չեն՝ հատկապես երբ խոսք է գնում այնպիսի կարևոր օբյեկտի օտարման մասին՝ ինչպիսին է ապրանքային նշանը՝ որով Ընկերությունը անհատականացնում է իր ապրանքները այլ սուբյեկտների ապրանքներից: Որպես Պայմանագրի խելամիտ և շրջահայաց կողմ Հայցվորը ակնհայտորեն պետք է իմանար Ընկերության կորպորատիվ մարմնի՝ տնօրենի լիազորությունների սահմանափակման մասին: Պայմանագիրը կնքելիս «ՏՎՄ Թրեյդ» բաց բաժնետիրական ընկերությունը պետք է նախատեսեր՝ որ տնօրենի մոտ բացակայում են պայմանագիրը կնքելու լիազորությունները և Պայմանագիրը կնքելիս ստուգեր Ընկերության կանոնադրությունը՝ ինչը չի արել:

Ինչ վերաբերում է Պատասխանողի կողմից վկայակցոված Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247.6-րդ հոդվածին ապա նշել է՝ որ այդ հոդվածի 1-ին մասի համաձայն Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան՝ օտարերկրյա պետությունների դատարանների քաղաքացիական գործերով կայացրած վճիռները՝ որոշումները՝ ինչպես նաև օտարերկրյա պետությունների արբիտրաժային տրիբունալների վճիռները և որոշումները՝ որոնք կատարում են պահանջում՝ ենթակա են ճանաչման Հայաստանի Հանրապետության տարածքում:

Այսպիսով՝ ճանաչման պահանջը վերաբերում է այն դեպքերին երբ դատական ակտը կատարում է պահանջում: Տվյալ դեպքում Մոսկվայի արբիտրաժային դատարանի և դաշնային

արբիտրաժային դատարանի որոշումները կատարման ենթակա որոշումներ չեն» հետևաբար ճանաչում չեն պահանջում: Այդ որոշումները ներակայցվել են որպես լրացուցիչ փաստարկ այն հանգամանքի՝ որ ապրանքային նշանը կազմում է Հայցվորի գործունեության էական մասը:

Բացի այդ Պայմանագրում առարկան սահմանված չէ: Այսպես՝ Պայմանագրի 1-ին կետում բառացիորեն գրված է.

«ներքոստորագրյալ Իրավունք գիջողը ներքոստորագրյալ Իրավունք ընդունողին գիջում է ստորև նշված ապրանքային նշանի նկատմամբ:

«Ապրանքային և սպասարկման նշանների» ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի համաձայն ապրանքային նշանը պայմանագրով կարող է զիջվել այլ անձանց՝ բոլոր այն ապրանքների կամ դրանց մի մասի համար՝ որոնք նշված են ապրանքային նշանի վկայագրում: Այսպիսով՝ «Ապրանքային և սպասարկման նշանների» ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքը սահմանում է՝ որ ապրանքային նշանի զիջման պայմանագրով զիջվում է ապրանքային նշանը:

Ինչպես երևում է Պայմանագրի 1-ին կետից Պայմանագրի առարկան սահմանված չէ՝ այն է սահմանված չէ՝ թե ինչի համար է կնքվում պայմանագիրը: Մասնավորապես նշված չէ թե ինչն է զիջվում: Եթե զիջվում է ապրանքային նշանը՝ ապա այդ դեպքում Պայմանագրի առարկայում պետք է նշվեր՝ որ զիջվում է ապրանքային նշանը՝ այլ ոչ թե նշվեր «զիջում է ապրանքային նշանի նկատմամբ»՝ ինչպես՝ որ սահմանված է Պայմանագրում: Եթե զիջվելու էր ապրանքային նշանի նկատմամբ որևէ իրավունքը՝ ապա նշված չէ թե որ իրավունքն է զիջվել (օրինակ օգտագործման իրավունքը կամ սեփականության իրավունքը):

Այսպիսով՝ Պայմանագրի բովանդակությունից չի երևում դրանով զիջման ենթակա էր ապրանքային նշանը՝ թե ապրանքային նշանի նկատմամբ որևէ իրավունք:

Խնդրել է ամբողջությամբ բավարարել հայցը:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության 19.03.2010թ.–ի պատասխանի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

Պայմանագրում պարունակվող «ապրանքային նշանի նկատմամբ» արտահայտության տառացի նշանակությունից ակնհայտ է՝ որ «ապրանքային նշանի նկատմամբ» հասկացությունը նույնական չէ՝ «ապրանքային նշան» հասկացության հետ:

Ինչ վերաբերում է Պայմանագրի վերնագրին՝ հարկ են համարել անալոգիայի կարգով անդրադառնալ «Իրավական ակտերի մասին»

ՀՀ օրենքի դրույթներին՝ որոնցով սահմանվում են իրավական ակտի մեկնաբանման կանոնները: Այսպես՝ «Իրավական ակտերի մասին»

ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն իրավական ակտի կամ իրավական ակտի բաժնի՝ գլխի կամ հոդվածի վերնագիրը չի կարող օգտագործվել իրավական ակտի կամ համապատասխանաբար նրա բաժնի՝ գլխի կամ հոդվածի մեկնաբանման համար:

Այսպիսով՝ Պայմանագրի վերանագիրը չի կարող օգտագործվել պայմանագրի մեկնաբանման համար: Կարևորը ոչ թե պայմանագրի վերնագիրն է՝ այլ պայմանագրի բուն տեքստում սահմանված պայմանագրի առարկան: Այսպես՝ օրինակ եթե պայմանագիրը վերանագրված լինի առուվաճառքի պայմանագրի՝ իսկ պայմանագրի առարկայում սահմանվի՝ որ կողմերից մեկը վճարի դիմաց իր գույքը հանձնում է մյուս կողմի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը՝ ապա ելնելով պայմանագրի վերնագրից՝ չի կարող եզրակացնել՝ որ կնքվել է առուվաճառքի պայմանագիր: Նմանապես Պայմանագրի կետերի վերնագրերը՝ «իրավունքներ զիջող» և «իրավունքներ ընդունող»՝ չեն կանոն օգտագործվել Պայմանագրի մեկնաբանման համար: Բացի այդ եթե «իրավունքներ» բառը օգտագործվում է հոգնակի թվով՝ չի նշանակում՝ որ դրանում

ներառում է նաև սեփականության իրավունքը:  
Պատասխանող «ՏՎՄ Թրեյդ» բաց բաժնետիրական ընկերության կողմից 17.03.2010թ.–ին ներկայացված պատասխանի վերաբերյալ ներկայացնելով առարկություններ հայտնել է.  
Չնայած այն հանգամանքին՝ որ պայմանագիրը վերնագրված է «Ապրանքային նշանի զիջման պայմանագիր»՝ Պայմանագրում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից ակնհայտ է դառնում՝ որ Պայմանագրի տեքստում չկա որևէ դրույթ՝ որով կսահմանվի՝ որ Պայմանագրի մի կողմը ապրանքային նշանը զիջում է Պայմանագրի մյուս կողմին: Պայմանագրի նկատմամբ կիրառվելիք իրավունքից պետք է տարբերել իրավաբանական անձի կողմից քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և քաղաքացիական պարտականություններ ստանձնելու կարգը՝ որը որոշվում է իրավաբանական անձի անձնական օրենքի հիման վրա: Պայմանագիրը ենթակա է կարգավորման ՀՀ օրենսդրությամբ՝ սակայն այն հարցը թե օտարերկրյա իրավաբանական անձի անունից Պայմանագիր կնքելու իրավունք ով ուներ և ինչ կորպորատիվ որոշումներ են անհրաժեշտ որոշվում է տվյալ իրավաբանական անձի անձնական օրենքով: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1272-րդ հոդվածի 2-րդ մասով հստակ սահմանված է՝ որ իրավաբանական անձի անձնական օրենքի հիման վրա է որոշվում իրավունակության բովանդակությունը՝ քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և քաղաքացիական պարտականություններ ստանձնելու կարգը: Հետևաբար՝ այն հարցը՝ թե Սինգապուրում հիմնադրված ընկերության անունից ով կարող է պայմանագիր կնքել կարգավորվում է Սինգապուրի օրենքներով:  
Լրացնելով հայցի հիմքը հայցվորի ներկայացուցիչը հայտնել է. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594 հոդվածի 1 մասի համաձայն նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառու) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք կամ իրեն՝ կամ երրորդ անձին ուղղված գույքային իրավունք (պահանջ)՝ կամ ազատում է՝ կամ պարտավորվում է նրան ազատել իր կամ երրորդ անձի հանդեպ ունեցած գույքային պարտավորությունից: Այսպիսով՝ նվիրատվության առանձնահատկությունը նրա անհատույց բնույթն է: Ապրանքային նշանի զիջման պայմանագրում (այսուհետ՝ «Պայմանագիր») հատուցում նախատեսված չէ: Ապրանքային նշանի զիջման պայմանագիրը պարունակում է նվիրատվության տարրեր՝ քանի որ զիջված ապրանքային նշանի դիմաց՝ սահմանված չէ Մաստեր Բեվերիջ Ինդաստրիս Պոլ Լթ իրավունքը ստանալու որևէ համարժեք «ՏՎՄ Թրեյդ» բաց բաժնետիրական ընկերությունից: Ապրանքային նշանի զիջման դիմաց ապրանքային նշանի սեփականատերը՝ Մաստեր Բեվերիջ Ինդաստրիս Պոլ Լթ որևէ հատուցում չի ստացել: Այնքանով որքանով ապրանքային նշանի զիջման դիմաց հատուցում չի նախատեսվել՝ ապրանքային նշանի զիջման պայմանագիրը այդ մասով նվիրատվություն է: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 598 հոդվածի 3 կետի համաձայն արգելվում է՝ առևտրային կազմակերպությունների միջև հարաբերություններում նվիրատվությունը: Թե Հայցվորը՝ և թե Պատասխանողը առևտրային կազմակերպություններ են: Այսպիսով՝ երկու առևտրային կազմակերպություններ՝ Մաստեր Բեվերիջ Ինդաստրիս Պոլ Լթ և «ՏՎՄ Թրեյդ» բաց բաժնետիրական ընկերությունը կնքել են ապրանքային նշանի զիջման մասին անհատույց պայմանագիր՝ որով մի առևտրային կազմակերպությունը ապրանքային նշանը զիջել է մյուսին առանց դրա դիմաց որևէ հատուցման՝ որն էլ արգելվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 598 հոդվածի 3 կետով: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 305 հոդվածի համաձայն օրենքի կամ այլ իրավական

ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է: Պայմանագիրը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 598 հոդվածի 3 կետի պահանջներին» հետևաբար այն անվավեր է: Ինչ վերաբերում է Պայմանագրի գրանցման անվավերությանը նշել են« որ «Ապրանքային նշանների գինման մասին պայմանագրերի և լիցենզային պայմանագրերի գրանցման կարգը հաստատելու մասին» 10 մարտի 2005 թվականի Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական գարգացման նախարարի 1Տ1 49-Ն հրամանի (Կարգ) 5-րդ կետի համաձայն գիջման մասին պայմանագրի գրանցման դիմումը ստորագրում է ապրանքային նշանի սեփականատերը կամ նրա կողմից լիազորված անձը: Տվյալ դեպքում» Պայմանագրի գրանցման դիմումը ստորագրել է հավատարմատարը՝ Ա. Գալոյանը: Ընկերությունը հավատարմատար՝ Ա. Գալոյանին չի հանձնարարել Պայմանագիրը գրանցելու դիմում ստորագրել և ներկայացնել Գործակալություն: Այս հանգամանքը ընդունում է նաև հավատարմատարը Ա. Գալոյանը: Այսպիսով« ապրանքային նշանի սեփականատերը՝ Մաստեր Բեվերիջ Ինդաստրիա ՊտԷ ԼթԷ» չունենալով մտադրություն գրանցելու Պայմանագիրը« հանձնարարություն չի տվել հավատարմատարին՝ Ա. Գալոյանին կատարելու Պայմանագրի գրանցմանն ուղղված որևէ գործողություն: Ավելին» պարոն Ա. Գալոյանը նույնիսկ փաստաթղթերը անմիջականորեն Մաստեր Բեվերիջ Ինդաստրիա ՊտԷ ԼթԷ ընկերությունից չի ստացել: Ինչ վերաբերում է Ա. Սարգսևի կողմից Ա. Գալոյանին տրված լիազորագրին« նշել են« որ Մաստեր Բեվերիջ Ինդաստրիա ՊտԷ ԼթԷ ընկերության կանոնադրության 105-րդ կետի համաձայն լիազորագիրը պետք է ստորագրվեր առնվազն երկու անձի կողմից: Հետևաբար« այդ լիազորագիրը տրված չէր իրավասու անձի կողմից և այն Ա. Գալոյանին Մաստեր Բեվերիջ Ինդաստրիա ՊտԷ ԼթԷ ընկերության անունից հաղես գալու իրավասություն չէր տալիս: Ուստի« Գործակալության կողմից Պայմանագիրը գրանցվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 5-րդ մասի« Կարգի 5-րդ և 10-րդ կետերի խախտմամբ: Հիմք ընդունելով վերը շարադրվածը՝ խնդրել է դատարանին կայացնելու վճիռ Հայցն ամբողջությամբ բավարարելու վերաբերյալ:

Պատասխանող «ՏՎՄ Թրեյդ» բաց բաժնետիրական ընկերության դիրքորոշումը  
Պատասխանողի ներկայացուցիչը հայցվորի ներկայացրած հայցադիմումի վերաբերյալ հայտնել է, որ հայցադիմումն անհիմն է ամբողջությամբ և ենթակա մերժման:  
Հայցադիմումում նշված է« որ 2008 թվականի հունիսի 13-ին հայցվորը դիմել է Մտավոր սեփականության գործակալություն պահանջելով չեղյալ ճանաչել Ձիջման պայմանագիրը: Գործակալության բողոքարկման խորհուրդն այդ պահանջը բավարարել է« սակայն ՀՀ քաղաքացիական դատարանը վերացրել է խորհրդի որոշումը. ՀՀ քաղաքացիական դատարանի վճիռը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ:  
Հայցվորը պահանջում է անվավեր ճանաչել Ձիջման պայմանագիրը և այն գրանցելու մասին Գործակալության 29.05.2008թ. որոշումը. Ա. Հայցվորը պնդում է« որ Վիճարկվող Ձիջման պայմանագրում իր ընկերության կողմից առկա է միայն պարոն Սարգսևի ստորագրությունը» ով ընկերության երկու տնօրեններից մեկն է« իսկ նա նման փաստաթուղթ միանձնյա ստորագրելու իրավասություն չի ունեցել:  
Հայցվորը հղում է կատարում Ընկերությունների մասին Սինգապուրի օրենքի 160-րդ հոդվածի 1-ին մասին« որն ըստ նրա սահմանում է« որ «ընկերության տնօրեններից մեկը իրավունք չունի միանձնյա կնքելու այնպիսի գործարքներ» որոնք ենթադրում են ընկերության ամբողջ գույքի կամ դրա էական մասի օտարում: Նման գործարքները կարող են կնքվել միայն բոլոր տնօրենների կողմից

համատեղ և պարտադիր կերպով պետք է հավանության արժանանան ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից»:

Որպես հիմնավորում հայցվորը նշում է նաև 2004 թվականին Ռուսաստանի Ղաշնությունում քննված գործերը՝ որտեղ ըստ նրա ևս նմանատիպ պայմանագրերն անվավեր են ճանաչվել, և որ այդ վճիռներում մասնավորապես հաստատվել է՝ « որ վիճարկվող ապրանքային նշանը հանդիսանում է հայցվոր ընկերության արտադրանքի հիմնական ապրանքային նշանը և դրա օտարումն այլ ընկերության գործնականում հայցվորին գրկում է իր բիզնեսի առնվազն էական մասից: Ակնհայտ է՝ « որ հայցվորի այս փաստարկներն իր պահանջները հիմնավորել չեն կարող՝ քանի որ

- ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն օտարերկրյա իրավունքը դատարանում կիրառվում է այն դեպքում երբ պարզվում է դրա նորմերի գոյությունը և բովանդակությունը՝ օտարերկրյա պետությունում դրանց մեկնաբանման և կիրառման պրակտիկան: Տվյալ դեպքում հայցվորի պահանջի հիմք հանդիսացող միակ նյութական նորմը Սինգապուրի օրենքն է: Իսկ հայցվորը չի ներկայացրել դրա գոյությունը հաստատող ապացույց՝ օրենքի համապատասխան հոդվածների տեքստերը օրենսդրությամբ սահմանված կարգով թարգմանված ու վավերացված ընկերությանը չեն ներկայացվել: Բացի դրանից՝ հայցվորը չի ներկայացրել նաև օտարերկրյա պետությունում դրանց մեկնաբանման և կիրառման պրակտիկան:

- հայցվորը որևէ կերպ չի հիմնավորել որ Ջիջման պայմանագրի նկատմամբ՝ որը կնքվել է Ռուսաստանում և որի կողմերը ՀՀ ռեզիդենտ ընկերություններ չեն՝ կիրառելի է ՀՀ օրենսդրությունը և որ այդ պայմանագիրը կարող է վիճարկվել Հայաստանի Հանրապետության դատարաններում՝ մինչդեռ այդ պարտականությունը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի իմաստով նրա վրա է դրված:
- հայցվորն ինքն է նշում՝ « որ «Ռուսաստանի Ընկերությունների մասին Սինգապուրի օրենքի 160-րդ հոդվածի 1-ին մասը կիրառելի լինի» անհրաժեշտ է որ խոսք գնա այնպիսի գործարքի մասին որը ենթադրում է ընկերության ամբողջ գույքի կամ դրա էական մասի օտարում»:

Սինչդեռ միակ ապացույցը, որ նա բերում է այս կապակցությամբ դա ՌԴ-ի դատարանների վճիռներն են: Այսինքն ըստ էության չկա ապացույց որը ողջամտորեն թույլ կտա եզրակացնել որ տվյալ դեպքում Ջիջման պայմանագրի շրջանակներում խոսքը գնում է մի գործարքի մասին՝ որը ընկերության ամբողջ գույքի կամ դրա էական մասի օտարում է հանդիսանում: Ինչ վերաբերում է ՌԴ դատարաններում արված եզրահանգումներին՝ ապա դրանցում գնահատումները կատարվել են Ռուսաստանի Ղաշնության տարածքի համար: Այսինքն արդյոք առկա է գույքի ամբողջությամբ կամ էական մասի օտարում՝ թե ոչ՝ գնահատվել է Ռուսաստանի Ղաշնության համար՝ այդ երկրի տարածքում Հայցվորի իրականացրած բիզնեսի ու դրա ծավալների տեսանկյունից: Գտել են՝ « որ ՌԴ համար արված գնահատումները չեն կարող հիմք հանդիսանալ Հայաստանի համար նույնությամբ կիրառելու տեսանկյունից՝ քանի որ առնվազն մեկ հանգամանք նշել են՝ Հայաստանում գործ ունեն սպառման լիովին այլ շուկայի հետ ինչ կա Ռուսաստանում: Նման պայմաններում կարծում են՝ « որ հայցվորը պարտավոր է իր պնդումը հիմնավորել այնպես որ դա հստակորեն կիրառելի լինի Հայաստանի համար:

- Հայցվորի կողմից հիշատակվող ՌԴ դատարանների վճիռների վերաբերյալ դատարանի ուշադրությունը հրավիրել են այն հանգամանքին՝ որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247.6 հոդվածը սահմանում է օտարերկրյա դատարանների որոշումների ճանաչման ընթացակարգը: Հայցվորն այս հարցին չի անդրադարձել և այս առումով որևէ կերպ չի հիմնավորվում թե արդյոք ՌԴ

դատարանների որոշումների եզրահանգումները ինչ որ կերպ պետք է և կարող են հաշվի առնվել ՀՀ դատարաններում սույն գործի քննության առումով:

Բ. Ինչ վերաբերում է հայցվորի կողմից «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի հիշատակմանը՝ ապա այն նույնպես անհիմն է: Մասնավորապես՝ հայցվորը պնդում է՝ որ քանի որ Ջիջման պայմանագիրը անվավեր է՝ ապա այդ հոդվածը կիրառելի է այնքանով՝ որքանով որ Գործակալությունը իր վարչական ակտը՝ այսինքն պայմանագիրը գրանցելու մասին որոշումը՝ ընդունել է օրենքի խախտմամբ:

Նման պնդումն առնվազն անհասկանալի է՝ քանի որ՝

- Ջիջման պայմանագիրը ոչ Գործակալության կողմից այն գրանցվելու պահին և ոչ էլ այժմ

անվավեր չի հանդիսացել և հանդիսանում: Հետևաբար

Գործակալությունը որևէ կերպ չէր

կարող այդ տեսանկյունից օրենք խախտել

Գործակալությունը պայմանագրի վավերությունը ստուգող մարմին չի հանդիսանում»

- Հայցվորն ինքն է քաջատեղյակ՝ որ Գործակալության որոշման անվավեր ճանաչելու պահանջն արդեն մեկ անգամ քննվել է ՀՀ քաղաքացիական դատարանում՝ որի արդյունքում Ջիջման պայմանագիրը գրանցելու մասին որոշումը պահպանել է իր ուժը: Այսինքն, ամփոփելով, կատարվի որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի կիրառման ոչ մի հիմք գոյություն չունի՝ քանի որ գործակալությունն ուղղակի չէր կարող կատարած լինել այն խախտումը՝ որի մեջ «մեղադրվում է» հայցվորի կողմից: Եթե վերոգրյալն ամփոփեն կատարվի՝ որ հայցվորը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի իմաստով չի ապացուցել իր պահանջների հիմքում ընկած և ոչ մի փաստ կամ հանգամանք: Հայցվորը նաև չի ներկայացրել իր պահանջների իրավական պատշաճ հիմքերը: Գործում չկան նաև այլ ողջամիտ ապացույցներ՝ որոնք նույնիսկ վերաբերում են հայցապահանջին: Չանդրադառնով հայցվորի կողմից վկայակոչվող տարբեր մասնակներին՝ գտել են, որ կրկնվեն՝ դրանք գործի լուծման համար նշանակություն ունեցող ոչ մի հանգամանք չեն պարունակում կամ հաստատում: Խնդրել են դատարանից հայցապահանջը մերժելամբողջությամբ:

«ՏՎՄ Թրեյդ» բաց բաժնետիրական ընկերության ներկայացուցիչը ներկայացնելով հայցվորի բերած մի շարք փաստարկների վերաբերյալ ընկերության նկատառումները հայտնել է, որ մասնավորապես՝ հայցվորը լեզվաբանական բառախառն միջոցով փորձում է պնդել, որ վիճարկվող ապրանքային նշանի գիջման պայմանագրում հստակ նշված չէ թե ինչ իրավունքներ են գիջվում: Պետք է նկատի ունենալ՝ որ ապրանքային նշանի գիջումը դա ապրանքային նշանի փոխանցման տարբերակներից մեկն է: Այս կապակցությամբ հարկ են համարել վկայակոչել «Ապրանքային և սպասարկման նշանների» ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 5-րդ գլխի դրույթները /25-27 հոդվածներ/՝ որտեղ նախատեսված են ապրանքային նշանի փոխանցման ընթացակարգերը: Այդ հոդվածներով սահմանված է փոխանցման երկու տարբերակ՝ ապրանքային նշանի գիջում և ապրանքային նշանի օգտագործման թույլտվություն: Երբ կողմերը կնքում են «ապրանքային նշանի գիջման» պայմանագիր՝ դա արդեն ինքնին նշանակում է որ փոխանցվում է ապրանքային նշանը՝ և ոչ թե ասենք դրա օգտագործման իրավունքը միայն: Իսկ եթե պետք է փոխանցվեն ապրանքային նշանի նկատմամբ իրավունքի ինչ որ «բաղադրիչներ», ապա կողմերը դա պետք է իրականացնեն այլ տեսակի պայմանագրերով՝ օրինակ վերը նշված լիցենզային պայմանագրով և այլն: Հետևաբար խնդրել են դատարանին հաշվի չառնել հայցվորի նմանատիպ պնդումները՝ որոնք ակնհայտորեն

հակասում են օրենքի տրամաբանությանը: Բացի դրանից՝ հայցվորը նաև դատարանին է ներկայացրել Սինգապուրի օրենսդրության ու մանավորապես Ընկերությունների մասին օրենքից քաղված՝ «որտեղ սահմանված է» որ «անկախ ընկերության կանոնադրության մեջ առկա որևէ դրույթի տնօրենները չեն կարող կնքել ընկերության ամբողջ գույքի կամ դրա էական մասի կամ ընկերության ամբողջ գործունեությանը կամ դրա էական մասի տնօրինմանը վերաբերող որևէ գործարք» եթե այդ գործարքը չի հաստատվել ընկերության ընդհանուր ժողովի կողմից:» «ներկայացվել է նաև քաղվածք «Մասթր Բերիջ Ինդասթրիս Պտե.Լթդ» ընկերության կանոնադրությունից՝ որտեղ նշված է թե քանի տնօրեն պետք է ունենա ընկերությունը: Հայցադիմումի վերաբերյալ ներկայացված պատասխանում արդեն նշել էին՝ որ սույն գործով Սինգապուրյան օրենսդրության կիրառելիության հիմնավորումը հանդիսանում է հայցվորի պարտավորությունը: Մինչդեռ հայցվորը բավարարվել է միայն օրենքի տեքստը ներկայացնելով՝ ինչը ինքնին բավարար չէ հիմնավորելու համար որ այն պետք է կիրառվի: Միևնույն ժամանակ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի տրամաբանությունն ընդհակառակը հստակ կերպով ցույց է տալիս՝ որ սույն դեպքում կիրառվում է ՀՀ օրենսդրությունը՝ մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1285-րդ հոդվածը պայմանագրի նկատմամբ կիրառվելիք իրավունքի ընտրության վերաբերյալ կողմերի համաձայնության բացակայության դեպքում /ինչը հենց սույն գործի դեպքն է/ կիրառելի է համարում այն պետության իրավունքը՝ որի հետ առավել սերտ է կապված պայմանագիրը: Գտել է, որ սույն դեպքում անվիճելի է՝ որ զիջման պայմանագիրն «առավել սերտ» կապված է Հայաստանի Հանրապետության հետ՝ ու հետևաբար հենց վերջինիս իրավունքն է կիրառելի: Բացի դրանից՝ նույնիսկ եթե հայցվորը հիմնավորեր և ապացուցեր, որ կիրառելի է Սինգապուրյան օրենսդրությունը՝ ապա նրա կողմից դատարանին ներկայացված Ընկերությունների մասին օրենքի դրույթի գործելու համար նաև պետք է ցույց տար՝ որ ապրանքային նշանը՝ որի վերաբերյալ կնքվել է զիջման պայմանագիրը հանդիսանում է ընկերության գույքի կամ գործունեության էական մասը՝ ինչը ևս հայցվորը չի կատարել: Այնուամենայնիվ՝ նույնիսկ եթե հաշվի չառնեն այն հանգամանքը՝ որ հայցվորը որևէ կերպ չի հիմնավորել Սինգապուրյան օրենսդրության կիրառելիությունը՝ չնայած պարտավոր էր՝ այնուամենայնիվ՝ որ նույնիսկ Սինգապուրյան օրենսդրության իմաստով սույն գործում վիճարկվող Ջիջման մասին պայմանագիրը իրավաչափ է՝ քանի որ դրա կնքումը հաստատվել է հենց «Մասթր Բերիջ Ինդասթրիս Պտե.Լթդ» ընկերության ընդհանուր ժողովը՝ ինչպես և պահանջվում է հայցվորի կողմից հիշատակված Սինգապուրի ընկերությունների մասին օրենքով: Այդ որոշման մեջ հստակ երևում է նաև՝ որ զիջվող ապրանքային նշանը ընկերությունը չի գնահատում որպես իր գույքի կամ գործունեության էական մաս՝ ավելին այն գնահատում է որպես չօգտագործվող և շահույթ չբերող ու փոխարենը մեծ ֆինանսական ծախսեր առաջացնող: Հայցվորն իր առարկություններում նշում է, որ Ջիջման մասին պայմանագրի միայն անվանումում է նշվում ապրանքային նշանի զիջման մասին, մինչդեռ ըստ նրա «պայմանագրում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից ակնհայտ է դառնում, որ Պայմանագրի տեքստում չկա որևէ դրույթ որով կսահմանվի որ մի կողմը ապրանքային նշանը զիջում է մյուս կողմին»: Հարկ է նկատի ունենալ, որ պայմանագրի անվանումը ևս դրա բաղկացուցիչ մասն է, այսինքն նույնիսկ հայցվորի տրամաբանությամբ շարժվելու դեպքում ակնհայտ է, որ պայմանագրում նշված է զիջման մասին: Բացի դրանից պայմանագրում նշված են ապրանքային նշանը զիջող և ընդունող կողմերը, նշված է զիջող ապրանքային նշանը և ընդհանրապես բոլոր վավերապայմանները, որոնք պետք է լինեն այդպիսի պայմանագրում ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման

տեղանունների մասին» ՀՀ օրենքի: Հայցվորը նշում է նաև, որ տվյալ դեպքում պետք է տարբերել պայմանագրի նկատմամբ կիրառվող իրավունքը իրավաբանական անձի կողմից իրավունքներ ձեռք բերելու և պարտականություններ ստանձնելու կարգից և տվյալ դեպքում կիրառելի է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1272 հոդվածը: Հոդվածի ուղղակի ընթերցումից ակնհայտ է, որ այն նման հարցեր չի կարգավորում և ընդհանրապես կորպորատիվ կառավարման հետ ոչ մի կապ չունի: «Հայցադիմումի հիմքի լրացման» մեջ հայցվորը փորձում է ապացուցել« որ ապրանքային նշանի գիջման մասին վիճարկվող պայմանագիրը նվիրատվության պայմանագիր է» քանի որ դրանում հատուցման մասին նշում չկա: Այս առումով կրկին նշել են« որ ապրանքային նշանի գիջման պայմանագրի վավերապայմանները սահմանված են ՀՀ օրենսդրությամբ» սույն գործում վիճարկվող պայմանագիրը բավարարում է այդ վավերապայմաններն« առավել ևս» հայցվորը չի նշել« որ կոնկրետ օրենքի որ վավերապայմանին չի բավարարում պայմանագիրը: Հատուցման մասին նշում կատարելու պարտավորություն կողմերը ոչ մի օրենքով կամ այլ իրավական ակտով չեն ունեցել և չունեն: Հայցվորի տրամաբանությամբ շարժվելու դեպքում պետք է ընդունեն« որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և «Ապրանքային և սպասարկման նշանների» ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ Օրենքի համապատասխան դրույթները ի սկզբանե ոչ իրավաչափ են, քանի որ ստիպում են կողմերին կնքել ի սկզբանե անվավեր պայմանագրեր« իսկ բոլոր գիջման պայմանագրերն անվավեր են» այսինքն անվավեր պետք է ճանաչել Մտավոր սեփականության գործակալությունում գրանցված բոլոր նման պայմանագրերը: Ի վերջո ակնհայտ է« որ եթե կողմերն այդ թվում նաև« հայցվորը» եթե ցանկանային կնքել նվիրատվության պայմանագիր, ապա կկնքեին հենց այդպիսին« այլ ոչ թե ապրանքային նշանի գիջման մասին պայմանագիր» քանի որ դրանք լիովին տարբեր տեսակի պայմանագրեր են: Այս առումով ակնհայտ է« որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 598 հոդվածի կիրառելիության մասին այստեղ խոսք գնալ ընդհանրապես չի կարող: Եվ վերջապես հայցվորը կրկին խոսում է արտոնագրային հավատարմատարի կողմից լիազորված չլինելու հանձնարարական չստանալու և Գործակալության կողմից Պայմանագիրը օրենքի խախտմամբ գրանցելու մասին: Այս փաստարկները չեն կարող որպես հայցադիմումի հիմքի լրացում դիտվել քանի որ հայցվորը նախկինում ևս ներկայացրել է և նախորդ պնդումներում մանրամասն կերպով հերքել են դրանք և այդ առումով այստեղ չեն կրկնվում հղելով նախորդ փաստարկներին« որոնք արդեն գրավոր ներկայացվել են դատարանին և կողմերին: Միայն հակիրճ ընդգծել են, որ արտոնագրային հավատարմատարի լիազորագիրը տրված է օրենքի բոլոր պահանջներին համապատասխան« ի լրումն արդեն արված փաստարկների նաև դատարանին են ներկայացրել հայցվոր ընկերության իրավասու մարմնի որոշումը» որը ևս հաստատում է« որ հավատարմատարին լիազորած անձը այդպիսի իրավասությամբ օժտվել է հենց ընկերության կողմից.արտոնագրային հավատարմատարն ունեցել է պատշաճ լիազորագիր և որևէ հանձնարարական ստանալու խնդիր չի եղել» այդպիսի պահանջ որևէ իրավական ակտով սահմանված չէ. Գործակալության կողմից վիճարկվող պայմանագրի գրանցման ընթացքում որևէ իրավական նորմի խախտում տեղի չի ունեցել: «ՏՎՄ Թրեյդ» բաց բաժնետիրական ընկերության ներկայացուցիչը հայտնել է նաև հետևյալը.ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 317-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է« որ՝ վիճահարույց գործարքի անվավեր ճանաչման և դրա անվավերության հետևանքների կիրառման հայցը կարող է ներկայացվել այն օրվանից հետո մեկ տարվա ընթացքում« երբ հայցվորն իմացել էր կամ պարտավոր էր իմանալ գործարքն անվավեր ճանաչելու համար հիմք ծառայող հանգամանքների մասին: Ինչպես նշել են« հայցվորի կողմից վիճարկվող



պայմանագիրը կնքվել է 2005 թվականի նոյեմբերի 18-ին: Հայցվորը ոչ մի դեպքում չի կարող պնդել՝ թե տեղյակ չի եղել այդ պայմանագրի մասին՝ քանի որ պայմանագրի կողմերից մեկն է հանդիսացել՝ այսինքն հենց ինքն է կնքել այն: Հայցվորը նաև չի կարող պնդել՝ թե չի իմացել այդ պայմանագիրն անվավեր ճանաչելու համար հիմք հանդիսացող հանգամանքների մասին՝ քանի որ նրա հայցապահանջում նշված բոլոր այդ հիմքերը ուղղակի չեն կարող հայտնի չլինել նրան՝ որպես պայմանագրի կողմի: Առնվազն՝ հայցվորը պարտավոր էր իմանալ դրանց մասին՝ ինչը ևս բավարար է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 317-րդ հոդվածի կիրառման համար: Հետևաբար հայցվորը Ձիջման պայմանագրի անվավերության պահանջ կարող էր ներկայացնել մինչև 2006 թվականի նոյեմբերի 18-ը: Հայտնել է, որ 2008 թվականի հունիսի 13-ին «Մասթր Բեւրիջ Ինդասթրիս Պտե.Լթդ» ընկերությունը Մտավոր սեփականության գործակալություն է դիմել՝ պահանջելով չեղյալ ճանաչել Ձիջման պայմանագրի գրանցումը՝ սակայն որևէ կերպ չի բարձրացրել պայմանագրի անվավերության կամ վիճահարույց լինելու հարցը: Վերոգրյալից ակնհայտ ու անվիճելի են դառնում առնվազն հետևյալ հանգամանքները. հայցվորը տեղյակ է եղել Ձիջման պայմանագրի մասին դրա կնքման իսկ պահից՝ 2005թ. նոյեմբերի 18-ից, հայցվորն առնվազն պարտավոր էր իմանալ այդ պայմանագիրն անվավեր ճանաչելու համար հիմք հանդիսացող հանգամանքների մասին՝ եթե այդպիսիք կան՝ նույնպես հենց պայմանագիրը կնքելու պահից՝ հայցվորն արդեն իսկ գործակալություն է դիմել Պայմանագրի գրանցման չեղյալ ճանաչելու հիմքով 2008 թվականին՝ սակայն կրկին չի վիճարկել պայմանագրի անվավերությունը:

Հետևաբար ակնհայտ է և լրացուցիչ ապացուցման կարիք չունի այն հանգամանքը՝ որ տվյալ դեպքում հայցվորը չի պահպանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 317 հոդվածով սահմանված հայցային վաղեմության ժամկետը՝ մասնավորապես նա իրավունք ուներ սույն հայցապահանջը ներկայացնել մինչև 2006 թվականի նոյեմբերի 18-ը՝ այսինքն պայմանագիրը կնքելուց հետո մեկ տարվա ընթացքում: Ուստի՝ ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածով՝ խնդրել է հայցվորի հայցապահանջների նկատմամբ կիրառել հայցային վաղեմություն:

Պատասխանող Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության դիրքորոշումը  
Պատասխանողի ներկայացուցիչ՝ Արա Աբգարյանը հայտնել է հետևյալը.

Հայաստանի Հանրապետությունում «Մասթր Բեւրիջ Ինդասթրիս Պտե. Լթդ.» ընկերության անվամբ 2005թ հոկտեմբերի 17-ին գրանցվել է «GOLDEN EAGLE» բառային ապրանքային նշանը 30.04.2003թ-ի առաջնությամբ ԱԾՄԴ (ապրանքների եւ ծառայությունների միջազգային դասակարգման) 30-րդ դասի «սուրճ» սուրճի փոխարինիչներ» սուրճի բուսական փոխարինիչներ» սրճային ըմպելիքներ» սրճա-կաթնային ըմպելիքների համար: 2008թ մայիսի 15-ին արտոնագրային հավատարմատար Ա. Գալոյանը «Մասթր Բեւրիջ Ինդասթրիս Պտե. Լթդ.» ընկերության անունից գրանցման է ներկայացրել «Մասթր Բեւրիջ Ինդասթրիս Պտե. Լթդ.» ընկերության «GOLDEN EAGLE» գրանցման թիվ 9935 ապրանքային նշանը «ՏՎՄ Թրեյդ» Բաց Բաժնետիրական Ընկերությանը զիջելու մասին պայմանագիրը կնքված 18.11.2005թ: 2008թ մայիսի 29-ին գործակալությունում գրանցվել է զիջման պայմանագիրը (գրանցման թիվ 779): Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդն իր 2008թ. հուլիսի 29-ի նիստում քննարկել է «Մասթր Բեւրիջ Ինդասթրիս Պտե. Լթդ.» ընկերության 13«06.2008թ բողոքը՝

«Մասթր Բեւրիջ Ինդասթրիս Պտե. Լթդ.» ընկերությանը պատկանող գրանցման թիվ 9935 ապրանքային նշանի «ՏՎՄ Թրեյդ» Բաց Բաժնետիրական Ընկերությանը զիջելու մասին պայմանագրի գրանցման որոշման դեմ» որի արդյունքում 29.07.2008թ որոշում է կայացրել «Մասթր Բեւրիջ Ինդասթրիս Պտե. Լթդ.» ընկերության բողոքը բավարարելու և «Մասթր Բեւրիջ Ինդասթրիս Պտե. Լթդ.» ընկերությանը պատկանող գրանցման թիվ 9935 ապրանքային նշանի «ՏՎՄ Թրեյդ» Բաց Բաժնետիրական Ընկերությանը զիջելու մասին պայմանագրի գրանցման մասին որոշումն անվավեր /ճանաչելու մասին: «ՏՎՄ Թրեյդ» Բաց Բաժնետիրական Ընկերությունը հայցադիմում էր ներկայացրել ՀՀ Երեսանի քաղաքացիական դատարան վիճարկելով բողոքարկման խորհրդի 29.07.2008թ. թիվ 24/08 որոշումը: ՀՀ Երեսանի քաղաքացիական դատարանը 23.02.2009թ վճռով բավարարել է հայցադիմումը և անվավեր է ճանաչել բողոքարկման խորհրդի 29.07.2008թ որոշումը: Նշել է « որ բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքի հիմքերից մեկը եղել է ապրանքային նշանի զիջման մասին պայմանագրի կնքումը «կեղծ» կամ «ոչ իրավասու անձի կողմից կնքված» լինելու փաստարկները» որպես հիմնավորում բերվել են Ռուսաստանի Դաշնության դատական ակտեր և Սինգապուրյան օրենքների հոդվածներ» սակայն այդ հարցերը բողոքարկման խորհուրդը չի քննարկել» քանի որ դա ՀՀ դատարանների իրավասության հարցն է: Ըստ էության ներկայացված հայցադիմումի հիմքերը կրկնում են նախորդ պարբերությունում նշված հիմքերը» ուստի այս դեպքում ևս հայցադիմումում բարձրացված հիմքերը և պահանջը գործակալությունը չի կարող ընդունել կամ առարկել» քանի որ ըստ իրենց դատարանը պետք է որոշի ներկայացված փաստաթղթերի պարագայում արդյոք պայմանագիրը անվավեր է թե ոչ: Որից հետո միայն կծագի «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի կիրառելիության հարցը:

Ներկայացնելով ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության պատասխանը «Մասթր Բեւրիջ Ինդասթրիս Պտե. Լթդ.» ընկերության կողմից ՀՀ Երեսանի քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան մարտի 5-ին նախնական դատական նիստի ժամանակ ներկայացված հայցի հիմքի լրացման վերաբերյալ հայտնել է, որ առարկում են հայցվորի կողմից ներկայացված հիմքի լրացման դեմ» այն է՝ պայմանագրում նշված չէ պայմանագրի առարկան» հետևյալ հիմնավորմամբ: Նախ պայմանագրում նշված է ապրանքային նշանը գրանցման թիվ 9973» որը զիջվում է «պայմանագրի վերնագիրն է» բառացիորեն «ապրանքային նշանի զիջման մասին պայմանագիր»» նշված են կողմերը: Միայն վերը նշված պայմաններից իսկ ակնհայտ է « որ պայմանագիրը ապրանքային նշանի զիջման պայմանագիր է» բացի այդ «իրավունքների զիջող և իրավունքների ընդունող» հասկացությունները ներառում են ապրանքային նշանի նկատմամբ բոլոր իրավունքները՝ այդ թվում սեփականության» քանի որ օգտագործված են հոգնակի» այսինքն նաև ըստ պայմանագրի բովանդակության ակնհայտ է « որ խոսքը գնում է ապրանքային նշանի զիջման մասին: Խնդրել են մերժել զիջման մասին պայմանագրի գրանցման մասին 29.05.2008թ որոշման անվավեր ճանաչելու պահանջը:

Առարկությունում հայցվորը որպես անալոգիա հղում կատարելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 3-րդ մասին» նշում է որ իրավական ակտի վերնագիրը չի կարող օգտագործվել իրավական ակտի մեկնաբանման համար: Սակայն տվյալ դեպքում որպես անալոգիա «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 3-րդ մասը չի կարող հանդիսանալ և կիրառվել, քանի որ պայմանագրի մեկնաբանման վերաբերյալ նորմ արդեն իսկ առկա է ՀՀ քաղաքացիական օրենսգիրքում՝ հոդված 447» որը տալիս է այն պայմանները» որոնք հաշվի են առնվում

պայմանագիրը մեկնաբանելիս» որոնք իր հերթին համադրելիս ակնհայտ է դառնում» որ պայմանագրի անվանումը ևս կարող է պայմանագրի մեկնաբանման համար օգտագործվել: Առարկելով հայցվորի կողմից ներկայացված հիմքի լրացման դեմ» այն է՝ պայմանագրում հատուցում նախատեսված չէ» ուստի պայմանագիրը հանդիսանում է նվիրատվության պայմանագիր» հետևյալ հիմնավորմամբ: Նախ «Ապրանքային և սպասարկման նշանների» ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածը սահմանում է «Ապրանքային նշանը պայմանագրով կարող է զիջվել այլ անձանց՝ բոլոր այն ապրանքների կամ նրանց մի մասի համար» որոնք նշված են ապրանքային նշանի վկայագրում: Ապրանքային նշանը զիջել չի թույլատրվում» եթե դա կարող է սպառողին մոլորության մեջ զգելու պատճառ դառնալ ապրանքին կամ դրա արտադրողին վերաբերող հարցերում:» «Իսկ 27-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ «Ապրանքային նշանի զիջման և լիցենզային պայմանագրերը գրանցվում են լիազոր մարմնում: Չգրանցված պայմանագիրը համարվում է անվավեր:» այսինքն օրենքը սահմանում է « որ ապրանքային նշանը կարող է զիջվել ցանկացած անձի» այդ թվում մեկ իրավաբանական անձը» իրավատերը» կարող է ապրանքային նշանը զիջել մեկ այլ անձի» այդ թվում նաև մեկ այլ իրավաբանական անձի» օրենքը նաև չի պահանջում» որպեսզի զիջման պայմանագիրը հատուցելի կամ ոչ հատուցելի լինի» այսինքն ապրանքային նշանի զիջումը կլինի հատուցելի թե ոչ դա կողմերի որոշման խնդիրն է: Ինչ վերաբերում է պայմանագրում հատուցում չնախատեսվելու դեպքում այն նվիրատվության պայմանագիր համարելուն» ապա նշել է, որ օրենքը հստակ տարանջատել է ապրանքային նշանի զիջումը այլ տեսակի պայմանագրերից» այն հանդիսանում է ապրանքային նշանի զիջման պայմանագիր» այլ ոչ թե նվիրատվության կամ առուվաճառքի: Նշել է նաև» որ օրենքը հստակ սահմանում է» որ զիջման պայմանագիրը ենթակա է գրանցման անկախ այն հանգամանքից թե պայմանագրում նշված է հատուցման վերաբերյալ պայման թե ոչ: Ուստի հայցվորի պնդումներն անհիմն են:

Խնդրել է մերժել զիջման մասին պայմանագրի գրանցման մասին 29.05.2008թ որոշման անվավեր ճանաչելու պահանջը ամբողջովին:

## II. Պատճառաբանական մաս.

### Գործի փաստերը.

«Մասթր Բերիջ Ինդասթրիս Պտե.Լթդ.» ընկերության /իրավունք զիջող/ և «ՏՎՄ Թրեյդ» բաց բաժնետիրական ընկերության /իրավունք ընդունող/ միջև 18.11.2005 թվականին կնքվել է ապրանքային նշանի զիջման պայմանագիր, համաձայն որի «Մասթր Բերիջ Ինդասթրիս Պտե.Լթդ.» ընկերությունը զիջել է իր անվամբ գրանցված «վկայական թիվ 9935 «GOLDEN EAGLE» /«Գոլդեն Իգլ»/ ապրանքային նշանը:

Նշված պայմանագիրը իրավունք զիջողի կողմից ստորագրել է «Մասթր Բերիջ Ինդասթրիս Պտե.Լթդ.» ընկերության տնօրեն Սարգսևը:

Արտոնագրային հավատարմատար Ա. Գալոյանի կողմից 15.05.2008թ. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալություն դիմում է ներկայացվել ապրանքային նշանի զիջման պայմանագրի գրանցման մասին:

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության կողմից 29.05.2008թ. գրանցվել է ապրանքային նշանի զիջման պայմանագիրը՝ գրանցման համարը 779:

2009թ. փետրվարի 10-ին «Մասթր Բերիջ Ինդասթրիս Պտե.Լթդ.» ընկերությունը հայց է ներկայացրել «ՏՎՄ Թրեյդ» բաց բաժնետիրական ընկերության, ՀՀ էկոնոմիկայի նախարարության

մտավոր սեփականության գործակալության նկատմամբ ապրանքային նշանի զիջման պայմանագիրն անվավեր ճանաչելու և ապրանքային նշանի գրանցման մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

Պատասխանող «ՏՎՄ Թրեյդ» բաց բաժնետիրական ընկերության ներկայացուցչը 20.08.2010թ. գործի քննության ընթացքում դիմում է ներկայացրել է հայցապահանջների նկատմամբ հայցային վաղեմություն կիրառելու խնդրանքով:

Վերլուծություն

Քննելով հայցը, հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ միջնորդությունը, հետազոտելով ներկայացված ապացույցները, դատարանը հանգեց հետևյալին.

Ղատարանը գտնում է, որ սույն վեճի նկատմամբ կիրառելի է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 81-րդ գլխի «Պայմանագրային պարտավորությունների նկատմամբ կիրառվող իրավունքը» 6-րդ պարագրաֆում սահմանված են դրույթներ, որոնք վերաբերվում են պայմանագրային պարտավորությունների նկատմամբ կիրառվող իրավունքի հարցերին:

Մասնավորապես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1284 հոդվածով սահմանված է իրավունքի ընտրության հարցը կողմերի համաձայնության դեպքում, իսկ 1285 հոդվածով՝ պայմանագրի նկատմամբ կիրառվելիք իրավունքի հարցը իրավունքի ընտրության վերաբերյալ պայմանագրի կողմերի համաձայնության բացակայության դեպքում:

Նույն հոդվածի 3-րդ կետում սահմանված է, որ կիրառվելիք իրավունքի վերաբերյալ կողմերի համաձայնության բացակայության դեպքում նշված հոդվածի 1-ին և 2-րդ կետերում չթվարկված պայմանագրերի նկատմամբ կիրառվում է այն պետության իրավունքը, որտեղ հիմնադրվել է, բնակության վայր կամ գործունեության հիմնական վայր ունի այն կողմը, որը կատարում է նման պայմանագրի բովանդակության համար վճռական նշանակություն ունեցող պայմանը: Պայմանագրի բովանդակության համար վճռական նշանակություն ունեցող պայմանը որոշելու անհնարինության դեպքում կիրառվում է այն պետության իրավունքը, որի հետ առավել սերտ է կապված տվյալ պայմանագիրը:

Քննվող գործով վիճարկվում է Հայաստանի Հանրապետությունում գրանցված ապրանքային բառային նշանի զիջման պայմանագիրը, որով «Մասթր Բերիջ Ինդասթրիս Պտե.Լթդ» ընկերությունը զիջել է իր անվամբ գրանցված «GOLDEN EAGLE» /«Գոլդեն Իգլը»/ ապրանքային նշանը «ՏՎՄ Թրեյդ» բաց բաժնետիրական ընկերությանը:

Ուստի, պայմանագիրն առավել սերտ կապված է Հայաստանի Հանրապետության հետ և պայմանագրի նկատմամբ կիրառելի է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1291 հոդվածի 2-րդ կետում սահմանված է, որ «մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքներ փոխանցելու կամ օգտագործելու պայմանագրերի նկատմամբ կիրառվում է պայմանագրային պարտավորությունների մասին՝ նույն բաժնի դրույթներին համապատասխան որոշվող իրավունքը»:

Անդրադառնալով հայցապահանջին այն հիմքով, որ պայմանագիրն անվավեր է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305 հոդվածի դրույթներին համապատասխան, քանի որ օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարք է, դատարանը գտնում է ոչ հիմնավոր հետևյալ պատճառաբանությամբ.

Հայցվորը պայմանագրի վիճարկման այդ հիմքում դնում է հետևյալ հանգամանքը. այն, որ պայմանագիրը չի հաստատվել «Մասթր Բերիջ Ինդասթրիս Պտե.Լթդ» ընկերության ընդհանուր ժողովի

կողմից, իսկ «Ընկերությունների մասին» Սինգապուրի օրենքի 160 հոդվածի 1-ին մասի համաձայն «ընկերության տնօրեններից մեկն իրավունք չունի միանձնյա կնքելու այնպիսի գործարքներ, որոնց ենթադրում են ընկերության ամբողջ գույքի կամ դրա էական մասի օտարում: Նման գործարքները կարող են կնքվել միայն բոլոր տնօրենների կողմից համատեղ և պարտադիր կերպով պետք է հավանության արժանանան բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48 հոդվածի 1-ին, 2-րդ մասերի համաձայն գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա:

Նույն օրենսգրքի 49 հոդվածի համաձայն ապացույցները ներկայացնում են գործին մասնակցող անձինք:

Գործի քննության ընթացքում պատասխանող «ՏՎՄ Թրեյդ» բաց բաժնետիրական ընկերության կողմից չապացուցվեց դատարանի կողմից նրա վրա դրված ապացուցման ենթակա այն փաստը, որ վիճարկվող գործարքը հաստատվել է ընկերության ընդհանրապես ժողովի կողմից: Սակայն, հայցվորի կողմից էլ չենք կայացվեց որևէ ապացույց, որով կապացուցվեր պահանջի հիմքում ընկած այն փաստը, որ Հայաստանի Հանրապետությունում գրանցված «GOLDEN EAGLE» /«Գոլդեն Իգլ»/ ապրանքային նշանը հանդիսանում է «Մասթր Բերիշ Ինդասթրիս Պտե.Լթ» ընկերության ամբողջ գույքը կամ դրա էական մասը:

Ինչ վերաբերում է որպես ապացույց ներկայացված Ռուսաստանի Դաշնությունում կայացրած դատական ակտերին, դատարանը գտնում է, որ դրանցով չի կարող հիմնավորվել, որ Հայաստանի Հանրապետությունում գրանցված ապրանքային նշանը հանդիսանում է ընկերության ամբողջ գույքը կամ դրա էական մասը:

Հայցվորը վիճարկում է պայմանագիրը նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 315 հոդվածով նախատեսված հիմքով և հիմքում դնում է այն հանգամանքները, որ, ընկերության կանոնադրության 105-րդ կետի համաձայն «տնօրենները ապահովում են կնիքի պահպանությունը, որն օգտագործվում է միայն տնօրենների թույլտվությամբ կամ տնօրենների կոմիտեի թույլտվությամբ, եթե վերջինիս տնօրենների կողմից տրվել է նման իրավասություն: Կնիքով հաստատման ենթակա ցանկացած փաստաթուղթ պետք է ստորագրվի մեկ տնօրենի կողմից և նաև քարտուղարի կամ երկրորդ տնօրենի կամ տնօրենների կողմից այդ նպատակով նշանակված այլ անձի կողմից», իսկ զիջման պայմանագիրը ստորագրվել է տնօրեններից միայն մեկի՝ Սարգսյանի կողմից, ուստի գործարքը կնքելիս իրավաբանական անձը դուրս է եկել կանոնադրությամբ նախատեսված սահմանափակումների շրջանակներից:

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 315 հոդվածի եթե անձի՝ գործարք կնքելու լիազորությունները սահմանափակված են պայմանագրով կամ իրավաբանական անձի մարմնի լիազորությունները՝ նրա կանոնադրությամբ, համեմատած այն լիազորությունների հետ, որոնք սահմանված են լիազորագրում, օրենքում կամ ակնհայտ են այն իրադրությունից, որում կնքվել է գործարքը, և դա կնքելիս նման անձը կամ մարմինը դուրս է եկել այդ սահմանափակումների շրջանակներից, դատարանը կարող է գործարքն անվավեր ճանաչել այն անձի հայցով, ի շահ որի սահմանված են սահմանափակումները, միայն այն դեպքերում, երբ կապացուցվի, որ գործարքի մյուս կողմը գիտեր կամ ակնհայտորեն պետք է իմանար նշված սահմանափակումների մասին:

Տվյալ պարագայում դատարանը գտնում է, որ առկա է վերը նշված հոդվածով նախատեսված անվավերության հիմքերից այն որ, իրավաբանական անձը գործարքը կնքելիս դուրս է եկել այն

սահմանափակումների շրջանակներից, որով սահմանափակված են նրա կանոնադրությամբ, սակայն որևէ ապացույցով չհիմնավորեց, որ «ՏՎՄ Թրեյդ» բաց բաժնետիրական ընկերությունը գիտեր կամ ակնհայտորեն պետք է իմանար գործարքի կնքման սահմանափակումների մասին:

Ուստի նշված հիմքով պահանջը նույնպես անհիմն է:

Հայցվորի պնդումը, որ ապրանքային նշանի զիջման պայմանագիրն իր էությանը նվիրատվության պայմանագիր է, դատարանը գտնում է ակնհայտ անհիմն հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437 հոդվածի համաձայն քաղաքացիները և իրավաբանական անձինք ազատ են պայմանագիր կնքելիս: Պայմանագիր կնքելուն հարկադրել չի թույլատրվում, բացառությամբ այն դեպքերի, երբ պայմանագիր կնքելու պարտականությունը նախատեսված է օրենսգրքով, օրենքով կամ կանոնակարգ ստանձնած պարտավորությամբ:

Նույն օրենսգրքի 438 հոդվածի համաձայն պայմանագիրը պետք է համապատասխանի այն կնքելու պահին գործող օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված՝ կողմերի համար պարտադիր կանոններին (իմպերատիվ նորմերին):

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1175 հոդվածի վկայագրում նշված ապրանքների և ծառայությունների բոլոր տեսակների կամ դրանց մի մասի համար ապրանքային նշանի նկատմամբ իրավունքը ապրանքային նշանի իրավատերը կարող է պայմանագրով փոխանցել այլ անձի:

«Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 25 հոդվածի համաձայն ապրանքային նշանը պայմանագրով կարող է զիջվել այլ անձանց՝ բոլոր այն ապրանքների կամ դրանց մի մասի համար, որոնք նշված են ապրանքային նշանի վկայագրում:

Այսինքն, նշված նորմերի բովանդակությունից պարզ է, որ ապրանքային նշանի զիջման պայմանագիրը օրենքով նախատեսված պայմանագիր է և դրա հատուցելիության վերաբերյալ օրենքով և այլ իրավական ակտերով որևէ դրույթ նախատեսված չէ:

Տվյալ հիմքով պահանջը նույնպես անհիմն է:

Բացի այդ, քննության առնելով «ՏՎՄ Թրեյդ» բաց բաժնետիրական ընկերության դիմումը հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ, դատարանը գտավ, որ այն հիմնավոր է և հայցն այդ հիմքով ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1283 հոդվածի համաձայն հայցային վաղեմությունը որոշվում է այն պետության իրավունքով, որը կիրառվում է համապատասխան հարաբերությունը կարգավորելու համար:

Նույն օրենսգրքի 331, 332, 333 հոդվածների համաձայն հայցային վաղեմություն է համարվում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը: Հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը երեք տարի է: Պահանջների որոշ տեսակների համար օրենքով կարող են սահմանվել հայցային վաղեմության ընդհանուր ժամկետի համեմատությամբ կրճատ կամ ավելի երկար հատուկ ժամկետներ:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 317 հոդվածի վիճահարույց գործարքի անվավեր ճանաչման և դրա անվավերության հետևանքների կիրառման մասին հայցը կարող է ներկայացվել, երբ հայցվորն իմացել էր կամ պարտավոր էր իմանալ գործարքն անվավեր ճանաչելու համար հիմք ծառայող հանգամանքների մասին:

Նշված օրենսգրքի 335 հոդվածի համաձայն դատարանը հայցային վաղեմությունը կիրառում է միայն վիճող կողմի դիմումով, որը պետք է տրվի մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը: Հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին դիմել է վիճող կողմը, հիմք է դատարանի կողմից հայցը մերժելու մասին վճիռ կայացնելու համար:

	<p>Հայցվոր «Մասթր Բերիջ Ինդասթրիս Պտե.Լթդ» ընկերությունը դիմել է դատարան 10.02.2009թ. խնդրելով անվավեր ճանաչել իր և «ՏՎՄ Թրեյդ» բաց բաժնետիրական ընկերության միջև 18.11.2005թ. կնքված ապրանքային նշանի գիջման պայմանագիրը, մինչդեռ վիճահարույց գործարքների անվավեր ճանաչման և դրա անվավերության հետևանքների կիրառման մասին հայցը կարող է ներկայացվել մեկ տարվա ընթացքում, երբ հայցվորն իմացել էր կապարտավոր էր իմանալ գործարքն անվավեր ճանաչելու համար հինք ծառայող հանգամանքների մասին:          Հետևաբար, հայցվորը բաց է թողել օրենքով նախատեսված իրավունքի պաշտպանության հայցային վաղեմության ժամկետը:</p> <p>Ամփոփում          Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 118, 130-132 հոդվածներով դատարանը</p> <p><b>Վ Ճ Ռ Ե Ց</b></p> <p>1. «Մասթր Բերիջ Ինդասթրիս Պտե.Լթդ» ընկերության հայցն ընդդեմ «ՏՎՄ Թրեյդ» բաց բաժնետիրական ընկերության, ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության՝ ապրանքային նշանի գիջման պայմանագիրն անվավեր ճանաչելու և ապրանքային նշանի գրանցման մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին մերժել:          2. Պետական տուրքի հարցը համարել լուծված:          3 Սույն դատական ակտը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ընթացքում:</p> <p><b>Դ Ա Տ Ա Վ Ո Ր Ս. Թ Ա Դ Ե Վ Ո Ս Յ Ա Ն</b></p>
<p><b>Դատական ակտի ամսաթիվը:</b></p>	<p>03-09-2010</p>
<p><b>Ակտով հոգուտ պետ. քույրեղի բռնագանձման ենթակա պետ. տուրքի չափը (ՀՀ դրամ):</b></p>	<p>0</p>
<p><b>Գործը, որոշումը հանձնվել է գրասենյակ:</b></p>	<p>06-10-2010</p>
<p><b>Էջերի քանակը:</b></p>	<p>63, 158, 129, 59</p>
<p><b>Գործին կից նյութեր:</b></p>	
<p><b>Այլ նշումներ:</b></p>	
<p><b>Ամսաթիվ:</b></p>	<p>07-10-2010</p>
<p><b>Էջերի քանակը:</b></p>	<p>63, 158, 129, 59</p>
<p><b>Գործին կից նյութերը:</b></p>	
<p><b>Որ դատարան է ուղարկվել:</b></p>	<p>Քաղաքացիական վերաք.</p>
<p><b>Ուր է ուղարկվել:</b></p>	
<p><b>Ելքի գրության համար:</b></p>	<p>25436</p>
<p><b>Ամսաթիվ:</b></p>	<p>08-10-2010</p>
<p><b>Ամսաթիվ:</b></p>	<p>28-12-2010</p>

<b>Գործը ստացվել է:</b>	Գործը ստացվել է բեկանումից հետո նոր քննության համար
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ամսաթիվ:</b>	29-12-2010
<b>Նախագահող դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Կենտրոն և Նորք-Մարաշ
Դատավորի անուն:	Ռուբեն Էդուարդի Վարդազարյան
<b>Դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Կենտրոն և Նորք-Մարաշ
Դատավորի անուն:	
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Որոշման ամսաթիվ:</b>	30-12-2010
<b>Դատաքննության ամսաթիվ:</b>	02-02-2011
<b>Ծանուցագիրը ուղարկվել է:</b>	24-01-2011
<b>Այլ նշումներ:</b>	նախնական դատական նիստ
<b>Ժամ:</b>	15:30
<b>Նիստերի դահլիճի համար:</b>	3
<b>Դատաքննության ամսաթիվ:</b>	14-02-2011
<b>Ծանուցագիրը ուղարկվել է:</b>	03-02-2011
<b>Այլ նշումներ:</b>	նախնական դատական նիստ
<b>Ժամ:</b>	15:30
<b>Նիստերի դահլիճի համար:</b>	3
<b>Դատաքննության ամսաթիվ:</b>	22-02-2011
<b>Ծանուցագիրը ուղարկվել է:</b>	14-02-2011
<b>Այլ նշումներ:</b>	նախնական դատական նիստ
<b>Ժամ:</b>	15:30
<b>Նիստերի դահլիճի համար:</b>	3
<b>Դատաքննության ամսաթիվ:</b>	10-03-2011
<b>Ծանուցագիրը ուղարկվել է:</b>	22-02-2011
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ժամ:</b>	15:30
<b>Նիստերի դահլիճի համար:</b>	3
<b>Դատաքննության ամսաթիվ:</b>	05-05-2011
<b>Ծանուցագիրը ուղարկվել է:</b>	03-03-2011
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ժամ:</b>	15:30



Նիստերի դահլիճի համար:	3
Դատաքննության ամսաթիվ:	19-05-2011
Ծանուցագիրը ուղարկվել է:	10-05-2011
Այլ նշումներ:	
Ժամ:	15:30
Նիստերի դահլիճի համար:	3
<b>Դատական Գործ N: ԵՔԴ/0103/02/09</b>	
Ամսաթիվ:	04-10-2010
<b>Քողոք բերող անձը</b>	
Անուն:	Մասթր Բերիշ Ինդասթրիս Պտե.Լթդ ընկերություն
Հասցե:	Սինգապուր
<b>Ներկայացուցիչ</b>	
Անուն	Լիանա
Ազգանուն	Յորդանյան
Հասցե	ք.Երեւան
Ուն կողմից է բերվել քողոքը:	Հայցվորի ներկայացուցիչ
Պետական տուրք:	10000
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
<b>Պատասխան բերող անձը</b>	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Քողոքարկվող դատական ակտը:	
Գործի համարը:	
Ամսաթիվ:	08-10-2010
Վիճակագրական տողի համարը:	5.5
Գործի համարը:	
Գործը բաղկացած է (հատոր / էջերի քանակ):	1-63, 2-158, 3-129, 4-59
Գործը ստացվել է:	Կենտրոն և Նորք-Մարաշ
Ամսաթիվ:	11-10-2010
<b>Նախագահող դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Քաղաքացիական վերաք.
Դատավորի անուն:	Արմեն Էդուարդի Թումանյան
<b>Դատավոր</b>	

Դատարանի անվանում:	Քաղաքացիական վերաք.
Դատավորի անուն:	Լևոն Գրիգորյան
<b>Դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Քաղաքացիական վերաք.
Դատավորի անուն:	Գոհար Մատինյան
Այլ նշումներ:	
<b>Երբ:</b>	13-10-2010
<b>Որոշումը ուղարկվել է կողմերին:</b>	13-10-2010
<b>Ուղարկվել է հուշաթերթիկ/որոշումը:</b>	13-10-2010
Այլ նշումներ:	
<b>Ամսաթիվ:</b>	10-11-2010
<b>Ծանուցագիրը ուղարկվել է:</b>	
<b>Ժամ:</b>	12:00
<b>Նիստերի դահլիճի համարը:</b>	103
<b>Ամսաթիվ:</b>	12-11-2010
<b>Ծանուցագիրը ուղարկվել է:</b>	
<b>Ժամ:</b>	15:00
<b>Նիստերի դահլիճի համարը:</b>	103
<b>Ամսաթիվ:</b>	12-11-2010
<b>Դատական ակտը բեկանվել է ամբողջությամբ:</b>	Գործն ուղարկվել է ստորադաս դատարան նոր քննության
<b>Դատական ակտը բեկանվել է մասնակի:</b>	
Այլ նշումներ:	
<b>Դատական ակտ:</b>	<p>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱՔԱՑՈՒՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ</p> <p>Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ Քաղաքացիական գործ թիվ ԵՔԴ/0103/02/09 վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վճիռ Նախագահող դատավոր՝ Ս.Թադևոսյան</p> <p>Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ</p> <p>Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան),</p> <p>նախագահությամբ՝ Ա.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ մասնակցությամբ՝ դատավորներ Գ.ՄԱՏԻՆՅԱՆԻ Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ</p>

2010 թվականի նոյեմբերի 12-ին դռնբաց դատական նիստում, քննելով հայցվոր «Մաստեր Բեվերիջ Ինդաստրիս Պոտ Լթ» ընկերության վերաքննիչ բողոքը Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 03-ի թիվ ԵԿԴ/0103/02/09 վճռի դեմ՝ ըստ հայցի «Մաստեր Բեվերիջ Ինդաստրիս Պոտ Լթ» ընկերության ընդդեմ «ՏՎՄ Թրեյդ» բաց բաժնետիրական ընկերության, ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության՝ ապրանքային նշանի գիջման պայմանագիրն անվավեր ճանաչելու և ապրանքային նշանի գրանցման մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին,

#### Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը «Մաստեր Բեվերիջ Ինդաստրիս Պոտ Լթ» ընկերությունը հայց է ներկայացրել դատարան ընդդեմ «ՏՎՄ Թրեյդ» բաց բաժնետիրական ընկերության, ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության՝ պահանջելով անվավեր ճանաչել գիջման պայմանագիրը, ինչպես նաև անվավեր ճանաչել գիջման պայմանագիրը գրանցելու մասին Գործակալության 2008 թվականի մայիսի 29-ի որոշումը: Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ նաև՝ Դատարան) հայցը մերժել է: Դատարանի վճռի դեմ վերաքննիչ բողոք է բերել հայցվոր «Մաստեր Բեվերիջ Ինդաստրիս Պոտ Լթ» ընկերությունը (ներկայացուցիչ Լիանա Յորդանյան): Վերաքննիչ դատարանը 2010 թվականի հոկտեմբերի 13-ին որոշում է կայացրել բողոքը վարույթ ընդունելու մասին: Վերաքննիչ բողոքի պատասխան է ներկայացրել պատասխանող «ՏՎՄ Թրեյդ» բաց բաժնետիրական ընկերությունը (ներկայացուցիչ Արարատ Գալոյանը):

2. Վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը Բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

1. Դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածը, ՀՀ Սահամանդրության 19-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ և 123-րդ հոդվածները, 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-6-րդ կետերը, 29-րդ հոդվածի 4-րդ մասը, որոնք ազդել են գործի ելքի վրա: Այդ պնդումը բողոք բերած անձը հիմնավորել է հետևյալ պատճառաբանությամբ՝ Դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի պահանջներին համապատասխան հայցվորի ներկայացուցչին կամ հայցվորին չի տեղեկացրել դատական նիստի ժամանակի և վայրի մասին և դատաքննությունն անցկացրել է նրա բացակայությամբ: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ վճիռը բոլոր դեպքերում ենթակա է քննարկման, եթե՝ դատարանը գործը քննել է գործին մասնակցող անձանցից որևէ մեկի բացակայությամբ, որը պատշաճ ձևով չի տեղեկացվել նիստի ժամանակի և վայրի մասին: Դատարանը վճռի ներածական մասում նշել է. «Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հայցվորի ներկայացուցչին 06.01.2010թ. (Վճռում ծանուցման ուղարկման ամսաթիվը հավանաբար

տեխնիկական սխալի արդյունքում սխալ է նշվել) ուղարկված ծանուցումը 16.06.2010թ. ետ է վերադարձվել «քաղաքից բացակայում է» մակագրությամբ, իսկ դատարանին և գործին մասնակցող անձանց չի տեղեկացրել իր հասցեն փոխելու վերաբերյալ ուստի, դատարանը իրեն վերջին հայտնի հասցեով ուղարկված ծանուցումը համարել է հայցվորին հանձնված և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածով դատական նիստն անցկացրել է հայցվոր կողմի բացակայությամբ»: Դատարանը նաև 2010 թվականի օգոստոսի 17-ին ստացել է հայցվորի ներկայացուցչի միջնորդությունը, որում մասնավորապես նշվել է. «Դատարանից ստացել ենք ծանուցում, համաձայն որի դատական քննությունը նշանակված է 16.08.2010թ-ին: ՀՀ կառավարության աշխատանքային օրերը տեղափոխելու մասին 17.12.2009թ-ի թիվ 1451-Ն որոշման համաձայն 2010 թվականի օգոստոսի 16-ի աշխատանքային երկուշաբթի օրը տեղափոխվել է 2010 թվականի օգոստոսի 21-ը՝ շաբաթ օրը: Դատական նիստը տեղափոխելու, նոր դատական նիստի օրվա և ժամի վերաբերյալ դատարանից գրավոր ծանուցում դեռ չեմ ստացել: Ցանականում եմ տեղեկացնելի որ 2010 թվականի օգոստոսի 20-ին բացակայելու եմ Հայաստանի Հանրապետությունից (մեկնելու եմ Իտալիա) և վերադառնալու եմ 2010 թվականի սեպտեմբերի 05-ին: Ուստի, խնդրում եմ ընդունելի համարել վերը շարադրվածը և դատական նիստի օրը որոշելիս՝ 20.08.2010թ-ից 05.09.2010թ-ն ընկած ժամանակահատվածի ընթացքում դատական նիստ չնշանակել»: Միջնորդությանը կցվել է նաև ուղևորատոմսի պատճենը:

2010 թվականի սեպտեմբերի 16-ին ետ ստանալով «քաղաքից բացակայում է» մակագրությամբ ծանուցագիրը, 2010 թվականի սեպտեմբերի 17-ին ստանալով հայցվորի ներկայացուցչի միջնորդությունը, որն ուղարկվել էր և հենց միջնորդության մեջ էլ հայցվորի ներկայացուցչի հասցեն նույնն է եղել (ՀՀ, ք. Երևան, Մաշտոց 13) Դատարանը եզրակացրել է, որ հասցեի փոփոխություն է տեղի ունեցել և որոշել է գործը քննել հայցվորի բացակայությամբ: Դատարանը տեղեկություն չի ստացել այն մասին, որ ծանուցագիրը հանձնվել է հայցվորի ներկայացուցչին և ոչ էլ ապացույց է եղել այն մասին, որ հայցվորի ներկայացուցիչ հասցեն փոփոխվել է: «Քաղաքից բացակայում է» մակագրությամբ ծանուցագրի վերադարձն ապացույց չէ այն մասին, որ հայցվորի ներկայացուցիչը տեղեկացել է դատական նիստի ժամանակի և վայրի մասին: Ավելին, 2010 թվականի սեպտեմբերի 17-ին, ստանալով Հայցվորի ներկայացուցչի միջնորդությունը, Դատարանը իմացել է, որ Հայցվորի ներկայացուցիչը տեղեկացված չէ դատական նիստի օրվա, ժամի և վայրի մասին, ինչպես նաև իմացել է, որ հենց դատական նիստի օրը Հայցվորի ներկայացուցիչը մեկնել է Հայաստանի Հանրապետությունից և այնուամենայնիվ անցկացրել է դատական նիստը հայցվորի ներկայացուցչի բացակայությամբ: Փաստորեն, հայցվորը գործի դատաքննությանը մասնակից չի դարձվել, ինչի արդյունքում խախտվել է վերջինիս ամենակարևոր իրավունքներից մեկը՝ Սահմանադրության 19-րդ հոդվածով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը, ինչպես նաև կողմերի իրավահավասարության և մրցակցության սկզբունքները և մի շարք իրավունքներ:

Դատարանը, դատական քննությունը մեկ նիստով ավարտել է, այն պարագայում, երբ պատասխանող «ՏՎՄ Թրեյդ» ԲԲԸ-ն դատական նիստի ժամանակ ներկայացրել է միջնորդություն հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ, որը Դատարանը հիմնավոր համարելով՝ հենց այդ հիմքով մերժել է հայցը: Դրանով իսկ, Դատարանը հնարավորություն չի ընձեռել հայցվոր կողմին հայտնել իր դիմադրողուն այդ միջնորդության վերաբերյալ: Այսպիսով՝ Դատարանը խախտել է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները, համաձայն որի

գործին մասնակցող անձանց դիմումները և միջնորդությունները գործի քննության հետ կապված բոլոր հարցերով դատարանը լուծում է գործին մասնակցող մյուս անձանց կարծիքները լսելուց հետո:

Կողմի տատաչած ծանուցված լինելու վերաբերյալ բողոքաբերը վկայակոչել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Նիկոդոսյանն ու Մելքոնյանն ընդդեմ Հայաստանի գործը, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի 2006 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 3-2128(11) նախադեպային որոշումը, 2006 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 3-2236(11), 2006 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 3-2449 (Ա) նախադեպային որոշումները:

Բողոքաբերը նշել է, որ թվարկված որոշումները պարտադիր են, այն պարզ պատճառով, որ սույն գործի և թվարկված որոշումներով գործերի փաստական հանգամանքները նույնաման են, այն է՝ գործերը քննվել են դատավարության մասնակցի բացակայությամբ՝ առանց վերջիններիս ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածով սահմանված կարգով պատշաճ ծանուցելու:

2. Դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածը, 118-րդ հոդվածի 2-րդ մասը:

Այդ պնդումը բողոք բերած անձը հիմնավորել է հետևյալ պատճառաբանությամբ՝

Դատարանը, ետ ստանալով ծանուցումը «քաղաքից բացակայում է» մակագրությամբ, եզրակացրել է, որ հասցեի փոփոխություն է տեղի ունեցել, որի մասին իրեն չի տեղեկացվել: «Քաղաքից բացակայում է» նշումը չի նշանակում հասցեի փոփոխություն: Ավելին, ծանուցումը ետ ստանալուց հետո՝ 2010 թվականի օգոստոսի 17-ին Դատարանը ստացել է հայցվորի ներկայացուցչի միջնորդությունը հենց նույն հասցեից և միջնորդության մեջ էլ հայցվորի ներկայացուցչի հասցեն նույնն է նշված եղել (ՀՀ ք.Երևան, Մաշտոց 13): Դատարանը որևէ կերպ չի հիմնավորել իր ենթադրությունը, որ հայցվորի ներկայացուցչի հասցեն փոփոխվել է:

Հայցվորի ներկայացուցչի նշած հասցեն (ՀՀ ք.Երևան, Մաշտոց 13) գործի վարույթի ժամանակ, այդ թվում Դատարանի կողմից ծանուցում ուղարկելու ժամանակ փոխված չի եղել: Հայցվորի ներկայացուցչին աշխատում է «Տեր-Տաճատյան» իրավաբանական և բիզնես խորհրդատվական ՓԲԸ-ում, որի հասցեն էլ հենց եղել է ՀՀ ք. Երևան, Մաշտոց 13: «Տեր-Տաճատյան» իրավաբանական և բիզնես խորհրդատվական փակ բաժնետիրական ընկերության հասցեն փոխվել է միայն 2010 թվականի սեպտեմբերի 01-ից: Նշված հանգամանքը հիմնավորվում է վարձակալության պայմանագիրը լուծելու մասին 2010 թվականի սեպտեմբերի 31-ին կնքված համաձայնագրի 1 և 2 կետերով, որոնցում մասնավորապես նշված է, որ 2010 թվականի սեպտեմբերի 01-ից լուծվում է վարձակալության պայմանագիրը և «Տեր-Տաճատյան» իրավաբանական և բիզնես խորհրդատվական ընկերությունը տարածքը փաստացի փոխանցել է 2010 թվականի սեպտեմբերի 01-ին (կից ներկայացվել է 31.09.2010թ-ին կնքված համաձայնագրի պատճենը): Այդ համաձայնագիրը Դատարանին չի ներկայացվել այն պարզ պատճառաբանությամբ, որ նման հարց մինչև Դատարանի կողմից վճիռ կայացնելը չի արժարժվել):

3. Դատարանը սխալ է կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 317-րդ հոդվածը:

Այդ պնդումը բողոք բերած անձը հիմնավորել է հետևյալ պատճառաբանությամբ՝

Դատաքննության ժամանակ (այն նիստին, որի ժամանակի և վայրի մասին հայցվորը պատշաճ չի ծանուցվել) «ՏՎՄ Թրեյդ» ԲԲԸ ներկայացուցիչը խնդրել է Դատարանին հայցվորի հայցապահանջների նկատմամբ կիրառել հայցային վաղեմություն: «ՏՎՄ Թրեյդ» ԲԲԸ ներկայացուցիչը նշել է, որ Պայմանագիրը կնքվել է 2005 թվականի նոյեմբերի 18-ին, հետևաբար Պայմանագրի անվավերության պահանջ կարող էր ներկայացվել մինչև 2006

թվականի նոյեմբերի 18-ը:

Ղատարանը, քննության առնելով «ՏՎՄ Թրեյդ» ԲԲԸ-ի դիմումը հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ, գտել է, որ այն հիմնավոր է և հայցն այդ հիմքով ենթակա է մերժման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 449-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ այն պայմանագիրը, որից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման, կնքված է համարվում այդ իրավունքի գրանցման պահից:

Նույն օրենսգրքի 1177-րդ հոդվածի 1 մասի համաձայն ապրանքային նշանի նկատմամբ իրավունքը փոխանցելու կամ լիցենզիա տրամադրելու մասին պայմանագիրը պետք է կնքվի գրավոր, իսկ դրանցից բխող իրավունքների փոխանցումը պետք է գրանցվի լիազոր մարմնում: Իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն գրանցման պահանջները չպահպանելը հանգեցնում է պայմանագրի անվավերության:

Նշված նորմերից հետևում է, որ ապրանքային նշանի գիջման մասին պայմանագիրը համարվում է կնքված լիազոր մարմնում համապատասխան գրանցում կատարվելու պահից:

Տվյալ դեպքում Պայմանագիրը ստորագրվել է 2005 թվականի նոյեմբերի 18-ին, իսկ ՀՀ մտավոր սեփականության

գործակալությունը համապատասխան գրանցումը կատարել է 2008 թվականի մայիսի 29-ին: Այսպիսով՝ Պայմանագիրը համարվել է կնքված ՀՀ մտավոր սեփականության գործակալությունում համապատասխան գրանցում կատարելու պահին՝ 2008 թվականի մայիսի 29-ին: Օրենքի ուժով, 2005 թվականի նոյեմբերի 18-ին ստորագրված Պայմանագիրը համարվել է անվավեր մինչև ՀՀ մտավոր սեփականության գործակալությունում համապատասխան գրանցում կատարելու պահը՝ 2008 թվականի մայիսի 29-ը:

Հայցվորը չի իմացել Պայմանագրի ստորագրման մասին:

Պայմանագիրը ստորագրվել է դրա իրավասությունը չունեցող անձի՝ պարոն Սարգսի կողմից, ով «Մաստեր Բեվերիջ Ինդաստրիս Պոլ Լթ» ընկերության տնօրեններից մեկն է և Պայմանագիրը միանձնյա ստորագրելու իրավունք չուներ: Ավելին, Պայմանագրի ստորագրման համար անհրաժեշտ էր «Մաստեր Բեվերիջ Ինդաստրիս Պոլ Լթ» ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի որոշումը, ինչպիսի որոշում չի կայացվել: Եթե «Մաստեր Բեվերիջ Ինդաստրիս Պոլ Լթ» ընկերությունն իմանար Պայմանագրի ստորագրման մասին, ապա կկանխեր ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից համապատասխան գրանցման կատարումը:

Հայցվորը, իմանալով, որ ԱՊՀ երկրների տարածքում Ապրանքային նշանի ապօրինի օտարման դեպքեր կան և կասկածելով, որ նման օտարում կարող է լինել նաև Հայաստանում, 2008 թվականի հունիս ամսին Ռուսաստանի Ղաշնությունում Սինգապուրի դեսպանատան և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջոցով դիմել է ՀՀ մտավոր սեփականության գործակալություն՝ տեղեկացնելով, որ Մաստեր Բեվերիջ Ինդաստրիս Պոլ Լթ Ապրանքային նշանն այլ անձանց գիջելու նպատակ չունի: Նաև խնդրել են հաստատել, որ դիմումի ընդունման ամսաթվի դրությամբ Ապրանքային նշանը գրանցված է հայցվորի անունով և միաժամանակ խնդրել, որ Ապրանքային նշանի հետ կապված իրավունքի գիջման պայմանագրերի ՀՀ մտավոր սեփականության գործակալություն մուտքագրվելու դեպքում, գործակալությունը տեղեկացնի հայցվորին (նշված նամակները առկա են գործի նյութերում): Սակայն, մինչև նամակների ուղարկումը ՀՀ մտավոր սեփականության գործակալությունը գրանցումն արդեն կատարել էր:

Այսպիսով՝ Պայմանագրի անվավերության հանգամանքների իմացության և Պայմանագրի վիճարկման մասին խոսք կարող է լինել միայն Պայմանագրի կնքումից հետո՝ 2008 թվականի մայիսի 29-ից հետո:

«Մաստեր Բեվերիջ Ինդաստրիս Պոլ Լթ» ընկերությունը Ղատարան հայց է ներկայացրել 2009 թվականի փետրվարի 10-ին:

Հետևաբար, հայցվորը հայցային վաղեմության ժամկետները չի խախտել:

Մինչդեռ, Ղատարանը, առանց հաշվի առնելու, թե երբ է Պայմանագիրը կնքվել և երբ է հայցվորն իմացել կնքված Պայմանագրի անվավեր ճանաչելու համար հիմք ծառայող հանգամանքների մասին, հայցային վաղեմության ժամկետը հաշվել է 2005 թվականի նոյեմբերի 18-ից, այսինքն Պայմանագիրը ստորագրվելու պահից:

4. Ղատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասը և 132-րդ հոդվածի 1-ին մասը: Այդ պնդումը բողոք բերած անձը հիմնավորել է հետևյալ պատճառաբանությամբ`

Ղատարանը վճռում նշել է. «Ինչ վերաբերում է որպես ապացույց ներկայացված Ռուսաստանի Ղաշնությունում կայացրած դատական ակտերին, դատարանը գտնում է, որ դրանցով չի կարող հիմնավորվել, որ Հայաստանի Հանրապետությունում գրանցված ապրանքային նշանը հանդիսանում է ընկերության ամբողջ գույքի կամ դրա էական մասը»:

Նախնական դատական նիստի ժամանակ Ղատարանն ապացուցում պահանջող փաստերի շրջանակի մեջ ներառել է այն հանգամանքը, թե արդյոք Պայմանագիրը վերաբերում է «Մաստեր Բեվերիջ Ինդաստրիա Պոլ Լթդ» ընկերության գործունեության (գույքի) էական մասը, թե` ոչ: Այդ հանգամանքի ապացուցման պարտականությունը Ղատարանը դրել էր հայցվորի վրա: Հայցվորը նշված հանգամանքն ապացուցել է Ռուսաստանի Ղաշնության Մոսկվա քաղաքի արբիտրաժային դատարանի որոշմամբ և դաշնային արբիտրաժային դատարանի որոշմամբ: Նշված որոշումներում արբիտրաժային դատարանները գտել են, որ “Golden Eagle” ապրանքային նշանը հայցվորի համար էական է: Նշված որոշումներով հիմնավորվել է, որ Հայաստանի Հանրապետությունում գրանցված ապրանքային նշանը հանդիսանում է հայցվորի գործունեության (գույքի) էական մասը, այն պարզ պատճառաբանությամբ, որ էականը որոշելու համար կարևորվում է ոչ թե այդ ապրանքային նշանի նմանալ արժեքը կամ շուկայական արժեքը, այլ այդ ապրանքային նշանի կարևորությունը հայցվորի բիզնեսի (գործունեության) համար: Ապրանքային նշանը հանդիսանում է հայցվորի հիմնական ակտիվը, իսկ հայցվորի հիմնական գործունեությունը ապրանքային նշանով մակնշված ապրանքների ներմուծումը, արտահանումը և վաճառքն է: “Golden Eagle” ապրանքային նշանը, անկախ նրանից թե որ պետությունում է գրանցված, հայցվորի համար ունի էական նշանակություն:

Ղատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն չիրականացնելու արդյունքում հանգել է սխալ հետևության այն մասին, որ Ռուսաստանի Ղաշնությունում կայացրած դատական ակտերով չի կարող հիմնավորվել, որ Հայաստանի Հանրապետությունում գրանցված ապրանքային նշանը հանդիսանում է ընկերության ամբողջ գույքի կամ դրա էական մասը: Ղատարանը իրավական գնահատականի չի արժանացրել Ռուսաստանի Ղաշնության Մոսկվա քաղաքի արբիտրաժային դատարանի և դաշնային արբիտրաժային դատարանի որոշումները: Ղատարանը փաստարկներ չի ներկայացրել և չի հիմնավորել, թե ինչու է մերժում Ռուսաստանի Ղաշնությունում կայացրած դատական ակտերը` որպես “Golden Eagle” ապրանքային նշանի` հայցվորի գործունեության համար էական համարվելու վերաբերյալ ապացույցներ: Մասնավորապես, Ղատարանը չի պատճառաբանել, թե ինչու կամ Ռուսաստանի Ղաշնության նշված դատական ակտերի որոշումների հետազոտմամբ, Ղատարանը գտավ, որ այդ ակտերով չի կարող հիմնավորվել, որ Հայաստանի Հանրապետությունում գրանցված ապրանքային նշանը հանդիսանում է հայցվորի գործունեության կամ գույքի էական մասը: Բացի այդ, հայցվորը, վիճարկելով Պայմանագիրը, նշել էր, որ Պայմանագրում առարկան սահմանված չէ: Այսպես, Պայմանագրի 1-

ին կետում բառացիորեն գրված է. «ներքոստորագրյալ Իրավունք զիջողը ներքոստորագրյալ Իրավունք ընդունողին զիջում է ստորև նշված ապրանքային նշանի նկատմամբ: Ինչպես երևում է Պայմանագրի 1-ին կետից Պայմանագրի առարկան սահմանված չէ, այն է. նշված չէ թե ինչն է զիջվում: Եթե զիջվում է ապրանքային նշանը, ապա այդ դեպքում Պայմանագրի առարկայում պետք է նշվեր, որ զիջվում է ապրանքային նշանը, այլ ոչ թե նշվեր «զիջում է ապրանքային նշանի նկատմամբ», ինչպես, որ սահմանված է Պայմանագրում: Եթե զիջվելու էր ապրանքային նշանի նկատմամբ որևէ իրավունքը, ապա նշված չէ թե որ իրավունքն է զիջվել (օրինակ օգտագործման իրավունքը կամ սեփականության իրավունքը): Սակայն, Ղատարանը վճռում չի անդրադարձել և իրավական գնահատականի չի արժանացրել Պայմանագրի անվավերության նշված հիմքը: Այդ կապակցությամբ բողոքաբեր կողմը վկայակոչել է ՀՀ վճռաբեկ դատարանի 2008 թվականի հուլիսի 25-ի թիվ 3-417 (ՎԴ), 2008 թվականի հունիսի 20-ի թիվ 3-422 (ՎԴ), 2007 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 3-1715(ՏԴ) նախադեպային որոշումները: Վկայակոչված քաղաքացիական գործերի և սույն գործի փաստական հանգամանքները նույնանման են այն պատճառաբանությամբ, որ բոլոր գործերում դատարանը չի պատճառաբանել թե ինչու է մերժում այս կամ այն ապացույցը: ՀՀ մտավոր սեփականության գործակալության 2008 թվականի մայիսի 29-ին պայմանագիրը գրանցելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի հետ կապված հայցվորը Ղատարանին ներկայացրել է երկու պահանջ՝ անվավեր ճանաչել Պայմանագիրը և անվավեր ճանաչել Պայմանագիրը գրանցելու մասին ՀՀ մտավոր սեփականության գործակալության 29.05.2008թ. որոշումը: Ղատարանը վճռի պատճառաբանական մասում որևէ կերպ չի անդրադարձել ՀՀ մտավոր սեփականության գործակալության 29.05.2008թ. որոշումն անվավեր ճանաչելու պահանջի հիմնավոր կամ անհիմն լինելու հարցին: Ղատարանը չի նշել որևէ օրենք կամ այլ իրավական ակտ, որը հիմք կհանդիսանար ՀՀ մտավոր սեփականության գործակալության 29.05.2008թ. որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մերժման կամ բավարարման համար: Այդ կապակցությամբ բողոքաբեր կողմը վկայակոչել է ՀՀ վճռաբեկ դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 3-2504(ՏԴ) նախադեպային որոշումը: Ավելին՝ վճռի եզրափակիչ մասում Ղատարանը նշել է. «1. «Մաստեր Բեվերիջ Ինդաստրիս Պոլ Լթդ» ընկերության հայցն ընդդեմ «ՏՎՄ Թրեյդ» բաց բաժնետիրական ընկերության, ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության՝ ապրանքային նշանի զիջման պայմանագիրն անվավեր ճանաչելու և ապրանքային նշանի գրանցման մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին մերժել»:

Այսպես՝ հայցվորն ապրանքային նշանի գրանցման մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջ դատարանին չի ներկայացրել: Հայցվորը Ղատարանից պահանջել է անվավեր ճանաչել Պայմանագիրը գրանցելու մասին ՀՀ մտավոր սեփականության գործակալության 2008 թվականի մայիսի 29-ի որոշումը, որին Ղատարանն ընդհանրապես չի անդրադարձել:

5. Ղատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 598-րդ հոդվածի 3-րդ կետը:

Այդ պնդումը բողոք բերած անձը հիմնավորել է հետևյալ պատճառաբանությամբ՝

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 598-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ արգելվում է՝ ամետրային կազմակերպությունների միջև հարաբերություններում նվիրատվությունը:

Ճիշտ է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1175-րդ հոդվածում նշված է, որ ապրանքային նշանի նկատմամբ իրավունքներն ապրանքային նշանի իրավատերը կարող է պայմանագրով փոխանցել այլ անձի, սակայն քաղաքացիական օրենսգիրքն առանձին կարգավորումներ



այդ տեսակի պայմանագրի համար չի նախատեսում: Ուստի, այդ տեսակի պայմանագրերի համար կիրառելի է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 598-րդ հոդվածի 3-րդ կետը: Նկատի ունենալով, որ և հայցվորը և «ՏՎՄ Թրեյդ» ԲԲԸ-ն առևտրային կազմակերպություններ են՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 598-րդ հոդվածի 3-րդ կետի հիման վրա վերջիններիս միջև ապրանքային նշանի փոխանցում առանց հատուցման արգելվում է: Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է ամբողջությամբ բեկանել Ղատարանի վճիռը և փոփոխել այն՝ ամբողջությամբ բավարարելով հայցադիմումը կամ գործն ուղարկել նոր քննության:

2.1 Վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացրած անձի դիրքորոշումը և հիմնավորումները  
Բողոքաբերի պնդումն այն մասին, որ Ղատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի դրույթներն, անհիմն է, քանի որ Ղատարանը կատարել է այդ հոդվածում նշված բոլոր պարտականությունները, մասնավորապես հայցվորին պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ, ուղարկել է ծանուցագիր: Ղատարանը ծանուցագիրը հետ է ստացել 16.08.2010 թվականին՝ «բացակայում է քաղաքից» մակագրությամբ: Միևնույն ժամանակ, նույն օրը՝ 2010 թվականի օգոստոսի 16-ին հայցվորի ներկայացուցիչը ևս մի միջնորդություն է ուղարկել Ղատարանին նշելով, որ ինքը բացակայելու է քաղաքից, այդ միջնորդությունը Ղատարանը ստացել է 17.08.2010 թվականին: Հետևաբար առնվազն հարց է ծագում ինչպես, կարող էր քաղաքից բացակայող ներկայացուցիչը նույն օրը Ղատարանին նամակ ուղարկել: Հարկ է նշել նաև, որ հայցվորի ներկայացուցիչն աշխատում է իրավաբանական ընկերությունում, ընդ որում բավական հայտնի ու բազմաթիվ աշխատողներ ունեցող և որ 2009 թվականի փետրվարից սկսված վարույթի ընթացքում սա միակ դեպքն է, երբ Ղատարանի ծանուցագիրը վերադարձվում է ներկայացուցչի «բացակայելու հիմքով» և բնականաբար հայցվորի ներկայացուցիչը չի կարող պնդել կամ ապացուցել, որ Ղատարանի կողմից ուղարկված բոլոր ծանուցագրերի կամ նամակների ստացման պահին ինքն առանց բացառության ֆիզիկապես ներկա է եղել իր աշխատատեղում: Ընդ որում դա այն դեպքում, երբ նույնիսկ ընկերության հասցեն փոխվելուց հետո՝ այսինքն 2010 թվականի սեպտեմբերի 01-ից հետո Ղատարանի վճիռը, որն ուղարկվել է նախկին հասցեով և այն հետ չի վերադարձվել: Այսինքն՝ հայցվորի ներկայացուցչի աշխատավայր ընկերությունում ձևավորված գործարար սովորույթ է, ընդ որում շատ տրամաբանական, երբ ծանուցագրերը կամ այլ նամակները հանձնվում են ներկայացուցչի աշխատավայրի հասցեում հետո փոխանցվում նրան, ավելին նույնիսկ հասցեն փոխվելուց հետո նախկին հասցեով եկած փաստաթղթերը կրկին փոխանցվում են նոր հասցե, ինչպես վճռի դեպքում: Վերը շարադրվածն ակնհայտորեն տալիս է եզրահանգման երկու հնարավոր տարբերակ, նախ առաջինը, որ ներկայացուցիչն տեսել է Ղատարանի ծանուցագիրը, սակայն ինչ որ պատճառով չի ցանկացել ներկա լինել օգոստոսի 20-ի նիստին, այսինքն ներկայացուցիչը պատշաճ կերպով ծանուցված է եղել և հետևաբար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի կիրառման հիմքերն առկա են: Այնուամենայնիվ Ղատարանը գործի հանգամանքները գնահատել է միակ հնարավոր մյուս տարբերակով որոշելով, որ «քաղաքից բացակայում է» մակագրությունը հիմք է հանդիսանում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի իմաստով գնահատել, որ հայցվորը փոխել է իր հասցեն դրա մասին տեղյակ չպահելով Ղատարանին կամ կողմերին:  
Բողոք բերած անձը նաև վկայակոչում է ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածը, հղում կատարելով ՄԻԵԴ-ի և ՀՀ վճռաբեկ Ղատարանի մի շարք ակտերի վրա, որոնք նրա պնդմամբ կիրառելի

են սույն գործի դեպքում: Պատասխանող կողմի պնդմամբ՝ հայցվորի կողմից հիշատակված գործերը ոչ միայն կիրառելի չեն սույն դեպքի համար, քանի որ փաստական հանգամանքները լիովին տարբերվում են, այլ ավելին հերքում են հենց իր հայցվորի փաստարկները: Մասնավորապես, բողոք բերած անձը հղում է կատարել Նիկողոսյան և Մելքոնյան ընդդեմ Հայաստանի գործով ՄԻԵԴ-ի կայացրած վճռին, որտեղ եվրոպական դատարանը եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում էր արձանագրել վերաքննիչ դատարանի նիստին կողմերից մեկին պատշաճ չժանուցելու հիմքով: Նիկողոսյան և Մելքոնյան ընդդեմ Հայաստանի գործում խոսքը գնում է վերաքննիչ դատարանում նիստի մասին ծանուցված չլինելու մասին: Բացի դրանից, ինչպես հենց այդ գործով իր վճռում /տես վճռի կետ 40-ը/ այնպես էլ, օրինակ, էդվարդնս ընդդեմ Միացյալ Թագավորության գործով /թիվ 13071/87/ եվրոպական դատարանը հստակ նշել է, որ եթե նույնիսկ ընդհանուր իրավասության դատարանում տեղի են ունեցել ընթացակարգային թերություններ, ապա դրանք կարող են շտկվել վերաքննիչ վարույթում, որը գործի ամբողջական քննություն իրականացնող ատյան է, մինչդեռ վերաքննիչ դատարանում նմանատիպ թերությունները վճռաբեկ ատյանում շտկվել չեն կարող: Հետևաբար, ակնհայտ է, որ Նիկողոսյան և Մելքոնյան ընդդեմ Հայաստանի գործ ոչ մի կերպ կիրառելի չէ սույն դեպքի համար, քանի որ գործերի փաստական հանգամանքները և սկզբունքը, որը կիրառելի է դրանց նկատմամբ, ամբողջապես տարբերվում են: Բողոք բերած անձի կողմից հիշատակվող բոլոր գործերը, որոնք նրա պնդումների հիմքն են հանդիսանում, ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի իմաստով, կիրառելի չեն սույն դեպքի համար: Միևնույն ժամանակ, հայցվորը հաշվի չի սույն քաղաքացիական գործի առանձնահատկությունն առ այն, որ տվյալ դեպքում խոսքը գնում է հայցային վաղեմության ժամկետն անցնելու հիմքով հայցը մերժելու մասին, և որ այդ առումով եվրոպական դատարանն առանձնահատուկ կանոն է սահմանում: Մասնավորապես, Սաթաբբինգը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության գործով /գանգատ թիվ 22083/93/ եվրոպական դատարանը որոշել է, որ եթե գոյություն ունի հայցային վաղեմության ժամկետի անցում, ապա նույնիսկ գործը դատարանի կողմից քննելը, չի հանգեցնի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտման: Վերոգրյալի արդյունքում ակնհայտ է, որ բողոք բերած անձը ողջամիտ կասկածից վեր չի ապացուցում, որ առկա է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 78-րդ հոդվածի ընթացակարգային խախտում, որը կարող է հանգեցնել ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի կամ եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտման, իսկ նախադեպերը, որոնք բողոք բերած անձը վկայակոչել է ի հիմնավորումն իր փաստարկի սույն գործի համար կիրառելի չեն: Նույնիսկ եթե ընդունվի, Ղատարանը թույլ է տվել ընթացակարգային ֆորմալ խախտումներ, ապա եվրոպական դատարանի կողմից սահմանված կանոնի համաձայն /տես օրինակ Խանն ընդդեմ Միացյալ Թագավորության գործը, թիվ 35394/97/ ներպետական դատարանների կողմից թույլ տրված ընթացակարգային ֆորմալ խախտումները նշանակություն ունեն միայն այն դեպքում երբ դրանց արդյունքում խախտվում է արդար դատաքննության իրավունքի էությունը: Իսկ այն, որ բողոք բերած անձի նշած ենթադրյալ խախտումները նրա գործի ելք համար որևէ նշանակություն ունենալ չէին կարող, հիմնավորվում է ստորև բերված փաստարկներով: Բողոք բերած անձը պնդել է, որ Ղատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածը և 118-րդ հոդվածի 2-րդ մասը, որն ազդել է գործի ելքի վրա: Գործի հանգամանքները և փաստերը գնահատելու իրավասությունը և հայեցողությունը դատարանին է պատկանում, նույնիսկ եվրոպական դատարանի նախադեպը հաստատում է այն, որ գործի ապացույցների գնահատումը դատարանի խնդիրն է: Տվյալ դեպքում Ղատարանը «քաղաքից բացակայում է» մակագրությամբ

ծանուցագիրը հետ ստանալը գնահատել է որպես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի կիրառման հիմք: Ընդ որում՝ հայցվորի ներկայացուցիչն ինքն է ընդունել, որ այնուամենայնիվ փոխել է իր հասցեն սակայն դատարանին չի հայտնել քանի որ այդ հարցը չի բարձրացվել: Մինչդեռ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածը կողմի պարտավորություն է սահմանում հասցեի փոփոխման մասին տեղեկացումը:

Վերջին հանգամանքը, որը ողջամիտ կասկածից վեր է, հաստատում է, որ հայցվորի ներկայացուցիչը օգոստոսի 16-ին քաղաքից չի բացակայել, նշված է հենց վերաքննիչ բողոքում: Մասնավորապես հայցվորի ներկայացուցիչն ինքն է նշել, որ դատարանին գրավոր տեղեկացում է քաղաքից բացակայելու դեպքում ընդ որում մի քանի օր առաջ, ինչը ևս հավանաբար նրա կողմից կիրառվող ընդունված պրակտիկա է, մինչդեռ օգոստոսի 16-ի համար այդպիսի նախազգուշացում դատարանին չի ուղարկել: Այսինքն նա կամ չի բացակայել կամ ենթադրյալ բացակայությունը չէր կարող հանգեցնել ծանուցագիրը չստանալուն:

Բողոք բերած անձի պնդումն այն մասին, որ Ղատարանը սխալ է կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 317-րդ հոդվածը, անհիմն է, հետևյալ պատճառաբանությամբ:

Հայցվոր կողմի տրամաբանությամբ՝ ապրանքային նշանի զիջման բոլոր պայմանագրերը նախ և առաջ կնքվում են կողմերի միջև, ապա նոր գրանցվում Մտավոր սեփականության գործակալությունում, և ստացվում է, որ առնվազն Հայաստանում կնքված բոլոր այդպիսի պայմանագրերը իրենց կնքման պահից օրենքի ուժով անվավեր են: Այսինքն պետք է կիրառվեն, օրինակ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 2-րդ մասի հետևանքները: Հետևաբար, իրենց կնքման պահից սկսած անվավեր պայմանագրերը ոչ միայն չեն կարող ներկայացվել Մտավոր սեփականության գործակալություն գրանցման, այլ նաև կնքելու հաջորդ պահին իսկ կողմերը կրկին պետք է միմյանց վերադարձնեն գործարքով ամբողջ ստացածը: Այսինքն՝ խուսափել նման իրավիճակից և գրանցել ապրանքային զիջման պայմանագիր Հայաստանում հնարավոր կլիներ միայն այն ժամանակ, եթե հայտնաբերվեր անվավեր պայմանագրերը կրկին «վավեր» դարձնելու ընթացակարգ: Իսկ քանի դեռ այդպիսին չկա, ապա եթե դատարանն ընդունի հայցվորի տրամաբանությունը, ապա օրենքի ուժով անվավեր կդարձնի նաև ներկայումս և ապագայում կնքվելիք ու կնքված, գրանցվելիք ու գրանցված բոլոր ապրանքային նշանի զիջման պայմանագրերը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 317-րդ հոդվածի 2-րդ մասի համապատասխան դրույթը, որը վերաբերում է սույն դեպքին, ունի հետևյալ տեքստը. «2. Վիճահարույց գործարքի անվավեր ճանաչման և դրա անվավերության հետևանքների կիրառման մասին հայցը կարող է ներկայացվել, ... այն օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, երբ հայցվորն իմացել էր կամ պարտավոր էր իմանալ գործարքն անվավեր ճանաչելու համար հիմք ծառայող հանգամանքների մասին»: Ակնհայտ է, որ «գործարքի կնքման» մասին հոդվածում խոսք չի գնում, ավելի պարզ ասած օրենքը գործարքի անվավեր ճանաչման պահանջի հաշվարկի սկիզբը չի կապում գործարքի կնքման պահի հետ, ինչպես փորձում է ներկայացնել բողոք բերած անձը: 317-րդ հոդվածի նման տրամաբանությունը նախատեսված է հենց 1177-րդ հոդվածով սահմանված պայմանագրերի տեսակների համար, որոնք ստորագրում են կողմերը, սակայն որոնք կնքված են համարվում միայն պետական մարմնում գրանցվելու պահից: Ընդ որում 449-րդ հոդվածը ևս պետական գրանցում ստացած չլինելն անվավերության չի հանգեցնում, կամ այլ կերպ ասած որպես ընդհանուր կանոն չի սահմանում, որ այն գործարքները, որոնք գրանցված ու հետևաբար կնքված չեն համարվում, անվավեր են: Եվ վերջապես, 1177 հոդվածը սահմանում է.

«1. Ապրանքային նշանի նկատմամբ իրավունքը փոխանցելու կամ

լիցենզիա տրամադրելու մասին պայմանագիրը պետք է կնքվի գրավոր, իսկ դրանցից բխող իրավունքների փոխանցումը պետք է գրանցվի լիազոր մարմնում:

2. Գրավոր ձևը և գրանցման պահանջները չպահպանելը հանգեցնում է պայմանագրի անվավերության»:

Ակնհայտ է, որ օրենքը գիշման պայմանագրի գրանցման ժամկետ չի սահմանում, ինչպես օրինակ անշարժ գույքի դեպքում, երբ ժամկետի ավարտը մեխանիկորեն անվավեր է դարձնում պայմանագիրը: Այս դեպքում պայմանագիրը կողմերը ստորագրում են, սակայն «դրանից բխող իրավունքների փոխանցումը պետք է գրանցեն» լիազոր մարմնում: Հոդվածի 2-րդ մասից հստակ է բխում, որ պայմանագիրն անվավեր է դառնում միայն այն դեպքում երբ իրավունքների փոխանցում է փաստացի լինում, սակայն այն չի գրանցվում:

Վերոգրյալից ակնհայտ է դառնում, որ ընդհանրապես բոլոր տեսակի պայմանագրերի համար օրենքը որպես անվավերության պահանջի ներկայացման ժամկետի սկիզբ չի համարում պայմանագրի՝ օրենքով սահմանված պետական գրանցման պահից կնքված լինելու ամսաթիվը, և հետևաբար ապրանքային նշանի գիշման պայմանագրի համար այդ ժամկետը պետք է հաշվարկվի այն կողմերի ստորագրելու օրվանից: Այսինքն քննարկվող դեպքում վիճարկվող պայմանագրի անվավերության խնդրի վերաբերյալ դատարան պահանջ ներկայացնելու համար 317-րդ հոդվածով սահմանված մեկ տարված ժամկետը պետք է հաշվարկվի 2005 թվականի նոյեմբերի 18-ից, երբ կողմերը ստորագրել են պայմանագիրը:

Ինչ վերաբերում է հայցվորի այն հայտարարությանը, թե ինքը չի իմացել Պայմանագրի ստորագրման մասին, ապա պատասխանող կողմը կարող է ընդունել, որ հայցվորի ներկայացուցիչը գուցե այդ Պայմանագրի մասին չի իմացել, սակայն ողջամիտ չէ այնդեմ, թե հայցվոր ընկերությունը՝ Մաստեր Բեվերիջ Ինդաստրիա ՊտԷ Լթ, ավելի քան 3 տարի սկսած 2005 թվականի նոյեմբերի 18-ից մինչև 2008 թվականի մայիսի 29-ը այդպես էլ չի իմացել իր իսկ կողմից ստորագրված Պայմանագրի մասին: Հիմնավորված չէ նաև հայցվորի այն պնդումը, թե Պայմանագրի մասին չիմանալու պատճառն այն է, որ այն ստորագրել է Սարգսևը, ով ընկերության տնօրենն է եղել նախ և առաջ այն հիմքով, որ Պայմանագրի կողմը չէ թե Սարգսևն է կամ ընկերության որևէ այլ պաշտոնյա այլ հենց ընկերությունը:

Պաշտոնյաները հանդես են գալիս ու գործում ընկերության անունից: Նույնիսկ եթե ենթադրվի, որ առկա է «ապրանքային նշանի ապօրինի օտարման դեպք», ինչպես նշվում է բողոքում, ապա այդ դեպքի մասին հայցվորն իմացել է դեռևս 2005 թվականին, երբ Ռուսաստանում արդեն սկսված են եղել նմանատիպ վարույթներ, ընդ որում կրկին կապված Սարգսևի ստորագրության խնդրի հետ: Հետևաբար հիմնավոր չէ այն իրավիճակը, երբ հայցվորն ունենալով բոլոր հիմքերը կասկածելու /ակնհայտորեն կիրառելի է օրենսգրքի 317-րդ հոդվածի կանոնը, որի համաձայն կողմը պետք է կամ պարտավոր էր իմանալ անվավերության հիմքերի մասին/ որ այդպիսի դեպքեր հնարավոր են նաև ԱՊՀ այլ երկրներում, Հայաստանում իր իրավունքները փորձել է պաշտպանել միայն 2008 թվականին, այսինքն մոտ 3 տարի առանց որևէ պատճառի կամ արդարացման սպասելուց հետո:

Այն, որ հայցվորն իր իսկ տրամաբանության մեջ հետևողական չէ վկայում է այն հանգամանքը, որ ըստ նրա, ՀՀ մտավոր սեփականության գործակալություն դիմել է 2008 թվականի հունիսին, կասկածելով որ Հայաստանում ևս իր իրավունքները կարող են խախտված լինել: Այսինքն՝ Հայաստանի մարմիններին դիմելուց հայցվորը չի իմացել, որ 2008 թվականի մայիսին գիշման պայմանագիրն արդեն գրանցված է եղել: Սակայն հայցվորը, որպես անվավերության պահանջի վաղեմության սկիզբ, ընդունում է ոչ թե իր իմանալու պահը, այսինքն առնվազն 2008 թվականի հունիսը, այլ նույն թվականի մայիսը, երբ ինքը ոչ մի կերպ ըստ իրեն չգիտեր անվավերության հիմքի առաջացման մասին:

Վերը նշվածը ողջամիտ կասկածից վեր ապացուցում է փաստարկն այն մասին, որ նույնիսկ եթե Ղատարանն ընթացակարգային թերություններ է ունեցել, ապա դրանք գործի ելքի վրա ազդել չէին կարող և չեն ազդել, քանի որ հայցվորն առնվազն հայցային վաղեմության առումով չունի ոչ մի իրավական կամ տրամաբանական փաստարկ, ու հետևաբար Ղատարանում վարույթը և դրա արդյունքը որպես ամբողջություն արդար են եղել: Բողոք բերած անձի պնդումը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53 հոդվածի 1-ին մասի, 132 հոդվածի 1-ին մասի խախտման վերաբերյալ անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ՝ Մինչև այս փաստարկներին առանձին անդրադառնալը պատասխանող կողմը նշել է, որ դրանք հիմնականում վերաբերում են վիճարկվող պայմանագրի անվավերության հիմքերին, և այս առումով պետք է նկատի ունենալ որ անվավերության պահանջի ներկայացման հայցային վաղեմության ժամկետն անցել է ու ցանկացած դեպքում, եթե նույնիսկ դատարան ինչ որ հանգամանքների չի անդրադարձել այն մանրամասնությամբ, որ կցանկանար հայցվորը, ապա դա գործի սխալ լուծման այսպես թե այնպես հանգեցնել չէր կարող:

Հայցվորի հիշատակած որոշումներից հղումները իրենցից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի տեսքով վերատրադությունն են հանդիսանում: Հայցվորը ցույց չի տվել, որ այդ գործերի փաստական հանգամանքները ու հետևաբար դրանց վերաբերյալ կիրառելի սկզբունքները նման են սույն գործին, հետևաբար առկա են ոչ պատշաճ ու ոչ վերաբերելի նախադեպեր: Հայցվորը պնդում է, որ Ղատարանը սխալ հետևություն է արել այն մասին, որ ՌԴ դատական ակտերով չի հիմնավորել, որ ՀՀ-ում գրանցված ապրանքային նշանը հանդիսանում է հայցվոր ընկերության գույքի էական մասը: ՀՀ օրենսդրությունն այլ երկրների դատական ակտերը ներպետական դատարանների համար պարտադիր չի համարում: Բացի դրանից հայցվորի այն պնդումը, թե անկախ աշխարհագրական վայրից ապրանքային նշանը նույն արժեքն ունի, քանի որ ապրանքային նշանի զիջման պայմանագրով սեփականատերը զրկվում է նշանից, չունի ոչ իրավական և ոչ էլ տրամաբանական հիմնավորվածություն: Նախ ապրանքային նշանի զիջման պայմանագրով սեփականատերը զիջում է իր իրավունքը միայն տվյալ երկրում, տվյալ դեպքում Հայաստանում, այլ ոչ թե ընդհանրապես և ամբողջ աշխարհում:

Հայցվորը պնդել է, որ Պայմանագրի առարկան սահմանված չէ: Նախ զիջման պայմանագրի տեսքով կամ շարադասության օրինակելի ձև օրենքը չի սահմանում, հետևաբար կողմերն ազատ են կնքել ցանկացած շարադասության պայմանագիր: Ամեն դեպքում նշել է, որ «ապրանքային նշանի նկատմամբ» բառերը, որոնք դուր չեն գալիս հայցվորին ուղղակիորեն հանդիսանում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1177-րդ հոդվածի տերմինները: Բացի դրանից, հարկ է նկատի ունենալ, որ հայցվոր ընկերությունը պայմանագրի կողմ է հանդիսանում, հետևաբար, եթե դրա ինչ-որ դրույթ նրան դուր չի գալիս կարող էր փոփոխել դա: Առնվազն ականհայտ է, որ եթե կողմերը համաձայնել են պայմանագրի ինչ-որ տեսքով շուրջ, ապա հետագայում չեն կարող պնդել, թե տեսքով լավ է ու հետևաբար պայմանագիրն անվավեր է:

Բողոք բերած անձը պնդել է, որ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 598-րդ հոդվածի 3-րդ կետը, որն ազդել է գործի ելքի վրա: Պնդել է նաև, որ հատուցում Պայմանագիրը չի նախատեսում, իսկ օրենքն արգելում է առևտրային կազմակերպությունների միջև նվիրատվությունը:

Ապրանքային նշանի զիջման պայմանագրի վավերապայմանները սահմանված են ՀՀ օրենսդրությամբ, սույն գործում վիճարկվող պայմանագիրը բավարարում է այդ վավերապայմանները, առավել ևս, հայցվորը չի նշել, որ կոնկրետ օրենքի որ վավերապայմանին չի բավարարում պայմանագիրը: Հատուցման մասին նշում կատարելու պարտավորություն կողմերը ոչ մի օրենքով կամ այլ իրավական

ակտով չեն ունեցել և չունեն: Հայցվորի տրամաբանությամբ շարժվելու դեպքում պետք է ընդունվի, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթներն ի սկզբանե ոչ իրավաչափ են, քանի որ ստիպում են կողմերին կնքել ի սկզբանե անվավեր պայմանագրեր, իսկ բոլոր զիջման պայմանագրերն անվավեր են, այսինքն՝ անվավեր պետք է ճանաչել Մտավոր սեփականության գործակալությունում գրանցված բոլոր նման պայմանագրերը: Ի վերջո, եթե բողոք բերած անձի տրամաբանությունն ընդունվի նաև, որ ապրանքային նշանի զիջման պայմանագրի տեսակ գոյություն չունի և որ դա նվիրատվության պայմանագիր է, մինչդեռ օրենսգիրքն այդպիսի մոտեցում չի արտահայտում: Վերաքննիչ բողոքում ներկայացված ու ողջամիտ կասկածից վեր ապացուցված չեն դատավարական և նյութական նորմերի այն խախտումները, որոնք թույլ է տվել դատարանը: Ավելին, հայցվորն ընդհանրապես չի ապացուցել, որ նույնիսկ եթե այդպիսի խախտումներ առկա են դրանք որևէ կերպ կարող էին կամ ազդել են գործի ելքի վրա: Վերոգրյալի հիման վրա պահանջել է վերաքննիչ բողոքը մերժել:

3. Վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը  
Վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) «Մաստեր Բեվերիջ Ինդաստրիս Պտէ Լթդ» ընկերության /իրավունք զիջող/ և «ՏՎՄ Թրեյդ» բաց բաժնետիրական ընկերության /իրավունք ընդունող/ միջև 2005 թվականի նոյեմբերի 18-ին կնքվել է ապրանքային նշանի զիջման պայմանագիր, համաձայն որի «Մաստեր Բեվերիջ Ինդաստրիս Պտէ Լթդ» ընկերությունը զիջել է իր անվամբ գրանցված «վկայական թիվ 9935 «GOLDEN EAGLE» /«Գոլդեն Իգըլ»/ ապրանքային նշանը:

2) Նշված պայմանագիրը իրավունք զիջողի կողմից ստորագրել է «Մաստեր Բեվերիջ Ինդաստրիս Պտէ Լթդ» ընկերության տնօրեն Սարգանը:

Արտոնագրային հավատարմատար Ա.Գալոյանի կողմից 2008 թվականի մայիսի 15-ին Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալություն դիմում է ներկայացվել ապրանքային նշանի զիջման պայմանագրի գրանցման մասին:

3) Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության կողմից 2008 թվականի մայիսի 29-ին գրանցվել է ապրանքային նշանի զիջման պայմանագիրը՝ գրանցման համարը 779:

4) 2009 թվականի փետրվարի 10-ին «Մաստեր Բեվերիջ Ինդաստրիս Պտէ Լթդ» ընկերությունը հայց է ներկայացրել «ՏՎՄ Թրեյդ» բաց բաժնետիրական ընկերության, ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության նկատմամբ ապրանքային նշանի զիջման պայմանագիրն անվավեր ճանաչելու և ապրանքային նշանի գրանցման մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

5) Պատասխանող «ՏՎՄ Թրեյդ» բաց բաժնետիրական ընկերության ներկայացուցչը 2010 թվականի օգոստոսի 20-ին գործի քննության ընթացքում դիմում է ներկայացրել է հայցապահանջների նկատմամբ հայցային վաղեմություն կիրառելու խնդրանքով:

4. Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները  
Քննելով վերաքննիչ բողոքը դրանում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում՝ Վերաքննիչ դատարանը եկավ հետևյալ եզրակացության.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի

համաձայն՝ գործին մասնակցող անձինք դատական ծանուցագրերով տեղեկացվում են դատական նիստի կամ առանձին դատավարական գործողություններ կատարելու ժամանակի և վայրի մասին: Ծանուցագիրն ուղարկվում է պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ հաղորդագրության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ կամ հանձնվում է ստացականով (այսուհետ՝ պատշաճ ծանուցում): Ծանուցագիրն ուղարկվում է գործին մասնակցող անձի նշած հասցեով:

Դատական նիստի ժամանակի և վայրի մասին գործին մասնակցող անձինք կամ նրանց ներկայացուցիչները պատշաճ ծանուցված են համարվում այն դեպքում, երբ դատարանում հավաստի տեղեկություն է ստացվում դատական ծանուցագիրը հասցեատիրոջը հանձնելու մասին:

Գործին մասնակցող անձանց՝ դատական նիստի ժամանակի և վայրի, դատավարական այլ գործողությունների իրականացման մասին պատշաճ ծանուցումը կողմերի դատական պաշտպանության իրավունքի, իրավահավասարության և մրցակցության սկզբունքների ապահովման կարևոր պայմանն է:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում արտահայտել է այն դիրքորոշումը, որ «հավասարության» սկզբունքը՝ կողմերի միջև «արդար հավասարակշռության» իմաստով պահանջում է, որպեսզի յուրաքանչյուր կողմ ունենա ողջամիտ հնարավորություններ կայացնելու իր գործն այնպիսի պայմաններում, որոնք նրան իր հակառակորդի նկատմամբ չեն դնի նվազ բարենպաստ վիճակում: Մրցակցային դատաքննության սկզբունքը ենթադրում է, որ յուրաքանչյուր կողմ պետք է ունենա գործում եղած կամ լրացուցիչ ներկայացված ապացույցների մասին տեղեկանալու և դրանց մասին մեկնաբանություններ ներկայացնելու հնարավորություն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածով նախատեսված՝ դատական նիստի ժամանակի և վայրի մասին գործին մասնակցող անձանց տեղեկանալու իրավունքը և դատարանի՝ նրանց տեղեկացնելու պարտականությունն ուղղակիորեն կապված են ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված օրենքի առջև բոլորի հավասարության հանդիմանուր սկզբունքի և դրանից բխող ու ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով պաշտպանվող մրցակցության և կողմերի հավասարության սկզբունքների հետ: Նշված սկզբունքներն ամբողջ ծավալով կարող են իրականացվել միայն այն դեպքում, երբ գործին մասնակցող անձանցից յուրաքանչյուրին ընձեռնված է դատական նիստին ներկա գտնվելու հնարավորություն: Այդ իսկ պատճառով դատական նիստի ժամանակի և վայրի մասին գործին մասնակցող անձանց տեղեկացնելը դատարանի պարտականությունն է, որի չպահպանելը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի իմաստով հանդիսանում է դատավարական իրավունքի էական խախտում:

Սույն գործով հաստատված փաստերից հետևում է, որ Դատարանը 2010 թվականի հուլիսի 08-ին որոշում է կայացրել գործը 2010 թվականի օգոստոսի 16-ին դատաքննության նշանակելու մասին: Կայանալիք դատական նիստի ժամի և վայրի մասին պատշաճ ծանուցել է «Մաստեր Բեվերիջ Ինդաստրիս Պտէ Լթ» ընկերությանը: Սակայն 2010 թվականի օգոստոսի 16-ին դատական նիստը տեղի չի ունեցել, քանի որ ՀՀ Կառավարության որոշմամբ նշված օրը հայտարարվել է ոչ աշխատանքային օր: Դրա վերաբերյալ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը կազմել է համապատասխան տեղեկանք: 2010 թվականի օգոստոսի 17-ին «Մաստեր Բեվերիջ Ինդաստրիս Պտէ Լթ» ընկերության ներկայացուցիչ Լիանա Յորդանյանը միջնորդություն է ներկայացրել, խնդրելով 2010 թվականի օգոստոսի 20-ից մինչև 2010 թվականի սեպտեմբերի 05-ն ընկած ժամանակահատվածի ընթացքում

դատական նիստ չնշանակել, պատճառաբանելով, որ 2010 թվականի օգոստոսի 16-ին դատական նիստը տեղափոխելու, նոր դատական նիստի օրվա և ժամի վերաբերյալ դատարանից գրավոր ծանուցում դեռ չի ստացել և նշված ժամանակահատվածում բացակայելու է Հայաստանի Հանրապետությունից (մեկնելու է Իտալիա), միջնորդությանը կցելով ուղևորատոմսի պատճենը: 2010 թվականի օգոստոսի 20-ի դատական նիստի վերաբերյալ 2010 թվականի օգոստոսի 13-ին Լիանա Յորդանյանին ուղարկված ծանուցումը վերադարձվել է դատարան «քաղաքացին բացակայում է» նշմամբ:

2010 թվականի օգոստոսի 20-ի դատական նիստում Դատարանը արձանագրելով՝ «Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հայցվորի ներկայացուցչին 06.01.2010թ. ուղարկված ծանուցումը 16.08.2010թ ետ է վերադարձվել «քաղաքացին բացակայում է» մակագրությամբ, իսկ դատարանին և գործին մասնակցող անձանց չի տեղեկացրել իր հասցեն փոխելու վերաբերյալ, ուստի, դատարանը իրեն վերջին հայտնի հասցեով ուղարկված ծանուցումը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի կարգով համարել է հայցվորին հանձնված և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածով դատական նիստն անցկացրել է հայցվոր կողմի բացակայությամբ»:

Մինչդեռ «քաղաքացին բացակայում է» նշումը հասցեի փոփոխում համարվել չի կարող, նամանավանդ այն պայմաններում, երբ 2010 թվականի օգոստոսի 17-ին Դատարանը տեղեկացվել է, որ հայցվորը նույն հասցեով ստացել է միայն 2010 թվականի օգոստոսի 16-ի ծանուցումը, գտնվելու է Հայաստանի Հանրապետությունից դուրս, ընդ որում միջնորդության մեջ նշվել է նույն հասցեն՝ ք. Երևան, Մաշտոց 13:

Այսինքն՝ Դատարանը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, հայցվորին պատշաճ ձևով չի տեղեկացրել դատական նիստի ժամանակի և վայրի մասին, գործը քննել է նրա բացակայությամբ ու վճիռ կայացրել:

Դատավարական նորմի նման խախտումը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի պահանջին համապատասխան, դատարանի վճիռը բոլոր դեպքերում բեկանելու հիմք է:

Այսպիսով՝ նշված հիմքը բավարար է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 03-ի թիվ ԵԿԴ/0103/02/09 վճիռը բեկանելու համար և վերաքննիչ բողոքի մնացած հիմքերին վերաքննիչ դատարանը չի անդրադարձնում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ և 221-րդ հոդվածներով՝ վերաքննիչ դատարանը

#### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վերաքննիչ բողոքը բավարարել: Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 03-ի թիվ ԵԿԴ/0103/02/09 վճիռը բեկանել և քաղաքացիական գործն ուղարկել նույն դատարան նոր քննության:
2. Դատական ծախսերի հարցին անդրադարձնալ քաղաքացիական գործի նոր քննության ընթացքում:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և նույն ժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ վճարելի դատարան:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱԿՈՐ՝ ԴԱՏԱԿՈՐ՝ ԴԱՏԱԿՈՐ՝  
Ա.ԹՈՒՄԱՆՅԱՆ Գ.ՄԱՏԻՆՅԱՆ Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ



	Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտել « » 2010 թվականին:
	Նախագահող դատավոր՝ Ա.ԹՈՒՄԱՆՅԱՆ
<b>Դատական ակտի ամսաթիվը:</b>	12-11-2010
<b>Ակտով հոգուտ պետ. բյուջեի բռնագանձման ենթակա պետ.:</b>	0
<b>Ամսաթիվ:</b>	09-12-2010
<b>Ամսաթիվ:</b>	09-12-2010
<b>Էջերի քանակ:</b>	1-63, 2-158, 3-129, 4-139
<b>Գործին կից նյութերը:</b>	
<b>Գործն ուղարկվել է:</b>	28-12-2010
<b>Ուր:</b>	Կենտրոն և Նորք-Մարաշ
<b>Գրության համարը:</b>	
<b>Այլ նշումներ:</b>	